ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԱՄԻԿՈՆԵՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՐՕՆՈՅ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄՍ 1832 ՌՄՁԱ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆ մամիկոնեան եպիսկոպոս յաւուրս Ներսեսի Հայրապետի Շինողին կացեալ, հրամանաւն բա գրեաց զգիրս զայս։ Յորում պատմէ զպատերազմունս տանն մամիկոնեանց ընդ Պարսս, և զՄուշեղայ և զԴայլ Վահանայ, այլովքն հանդերձ. որ ինչ յաւուրս Խոսրովու երկրորդի Պարսից աքքայի յերկրին Տարօնոյ գործեցան։ Այլ որ ինչ իրք 'ի Տրդատայ մինչև ցԽոսրով լեալ են, զոր մատենագիրս 'ի յիշատակարանին իւրում աւանդէ գտեալ 'ի կողմանս Նդեսեայ և Թարգմանեալ, ջերևին 'ի միջի։

Ընդ ստին 'ի նոցունց օրինակաց գրոցն Ղէնոբայ և տպագիրս այս արարաւ. առ որ ցանկալի էր մեզ ընտրելագոյն օրինակս 'ի ձեռին ունել։ Ղ'ի ա ռաւել և ս 'ի սմա գտանին փոփոխմունք և յաւելուածք. որք եթէ ոչ 'ի գրչագրաց իցեն յետոյ կըրճատեալ, ինքն իսկ արդեւք մատենագիրն, կամ յետ նորա Գէլակայ վանիցն առաջնորդք յաւելին զայնս ըստ նորին յորդորանացն՝ զոր 'ի յիշատակարանին իւ-

բում առնէ։ Զի «որք զկնի դոցա, ասէ, այլք նըս տին վանականք, զոր ինչ գործի յաւուրս նոցա 'ի տանս յայսմիկ՝ դիցէ 'ի նոյն մատեանս»։ Ընդ մեր հնգեցունց օրինակաց բաղդատութեամբ՝ անթերի զընագիրս յերիւրեալ, թողումք այլում տեղւոյ քննել որ ինչ 'ի սմա ըստ ժամանակագրութեան մասին գտանին անտեղութիւնք, և զպատճառս նոցին հետաքննեալ հոլանել։

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԱՄԻԿՈՆԵՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ

ԳԼՈՒԽ Ա.

Եթէ ոչք են, որ յաջորդեցին յառաջնորդութեանն Կարապետին, որ կոչի Գլակայ վանք։

ՕՆՈՒ եկաց հայր վանացն Գլակայ ամս քսան։

Յետ նորա Անդիոքեան աշակերտն Ղնտոնի ամս երեսուն։ Ի սորա տասն ամին եկն սուրբն Գրիգոր 'ի Գլակայ վանսն, եկաց Ամբեռեաց բլուրն առ Ղնտոն և Արծնիդէս չորս ամիս։ Եւ նոքա հանեալ զնա անտի ասելով. Գնա յանապատ յանմարդաբնակ տեղիս, զի մի՝ ոք փառաւորութիւն մատուցանէ քում սրբութեդ։ Իսկ նորա գնացեալ 'ի Մանեայ այրսն, և կացեալ անդ ամս եւթն, վախճանի 'ի կենացս 'ի փառս ՅԻ։

Ստեփանոս աշակերտ նորա ամս հնգետասան[1]։ Ի սորա չորրորդ ամին վախճանեցաւ նոյն Ղնտոն. և յետ երկուց ամսոց և նոյն Արծնիդէս, կացեալ ամս քառասուն յինքնակնեան տեղիս. և է սակաւ ինչ հեռագոյն Թաղեալ յեկեղեցւոյն ըստ հարաւոյ կուսէ։ Սա շինեաց եկեղեցի, ուր սուրբ Գրիգոր զնշխարսն պահեաց յայն կոյս Կուառաց, առ յորդաբուղխ աղ-

1 Յերկուս օրինակս ասին։

քերն. և կացոյց անդ կրօնաւորս վաթսուն հրեշտակային վարուք։

Լիբերմ ամն քսանեւութ։

Յովհաննէս ամն տասն[1]. սա էր 'ի ժամանակս սրբոյն Սահակայ։

Ղ խմինդոս ամն տասն։

Մարկոս ամն ութեւտասն[2]։

Կիւրեղ ամն քսան և երկու։ Սա առաջին էպիսկոպոս ձեռնադրեցաւ 'ի Մանդակունւոյն Յովհաննէ Հայոց կաթողիկոսէ։

Գրիգոր ամն վեց։

Ալնդրէաս ամն մետասան[3]։

Կերսէս ամն եօթն[4]։

Յովհաննէս ամն երիս[5]։

Սահակ ամն հինգ[6]։

Յովսէփ ամն վեց։

Բարթողիմէոս ամն չորս[7]։

Աթանաս ամն տասն[8]։ Սա էր, որ 'ի ժամանակս Մովսէսի Հայոց կաթողիկոսի զթուականն գրեաց հրամանաւ նորին 'ի Դուին քաղաքի. զի նա էր տեղեակ տումարի ամ ազգաց։

Կոմիտաս ամն ութ[9]։ Սա գնաց միաւորել յԱբրահամ Հայոց կաթողիկոսէ առ Ա. ըաց կաթուղիկոսն։

Ստեփաննոս ամն վեց։ Սա 'ի ժամանակս Կումիտասայ Հայոց կաթողիկոսի գնաց առ նա, և երեր մասն ինչ 'ի սրբոց Հռիփսիմեանց, և եդ 'ի Դվակայ վանքն՝ ուր ինքն իսկ էր։ Բ. անգի Կումիտաս վերըստին շինեաց զվկայարան սրբոց Հռիփսիմեանցն։

Բարսեղ[10] ամն ութ։

Թադէոս[11] ամն երեսուն։ Սա 'ի տղայութէ ստացաւ զառաքինութէ. և էր աշակերտ Բարսղի, որ եղև նմա սիրելի վասն վարուց իւրոց, և իշխանին մամիկոնէնից Մուշեղայ. և իշխանն բազմացոյց սմա

1 Յերկուս օրինակս չիսուն։
2 Յերկուս օրինակս Մաթար ամս էրէսուտասան։
3 Յերկուս օրինակս ութ։ 4 հինգ։
5 Երեսուն։ 6 Եօթն։ 7 Երիս։ 8 Վեց։
տասան։ 9 տասն։
10 Յերիս օրինակս Բարթողիմէոս։
11 Յերկուս օրինակս Թադէի ԵՒ և Ճգնաւոր։

դաստակերտս բազում։ Այս բազում կրօնաւորս կար գեաց 'ի Գլակայ վանսն միաձայակս և ձգնաւորս՝ առանձինս բնակել, անձինս երեք հարեւր ութսուն և ութ։

Զրդ 'ի սորա ժամանակս եկին արք չորք 'ի կողմանցն Յունաց, արք ձգնաւորք և խոտաձարակք, որոշեալք յամ մարմնական հեշտութեց, որք կամէին անցանել ընդ Սուկաւ։ Իբրև եկին 'ի տեղիսն յայն, հաձեցան բնակել յանապատ. և կացեալ ամս երկու, լուան ոմանք 'ի կողմանցն Սագաստանաց արք երեք. և եկեալ 'ի նոյն տեղին Գլակայ, և հանդիպեալ միմեանց՝ դադարեցին 'ի միում վայրի։ Ոմանք յինանկնեան վայրսն, յԶեռեաց բլուրն. և ոմանք 'ի քարայրին, որ 'ի հարաւակողմն արևելեան է, 'ի Թագուաձի խաչի կողմանն. իսկ ոմանք 'ի կողմանց անտառաբերեն։ Եւ այնպէս բազում ժամանակս կեցեալ 'ի սոյն խստակրօնութեանն։

Զրդ 'ի ժամանակս իշխանութեան մամիկոնենից Մուշեղայ, և Թոդկայ վանականութեն[1], հրաշալի ինն գործեցան գործք 'ի վանսն Գլակայ 'ի դուռն՝ որ Կարապետին։ Իշխանն Զրծրունեաց, որում անունն կոչիւր Ս արդ պատրիկ, սա շինեաց բազում եկեղեցիս և վանորայս. և ունէր կին բարեպաշտօն, Մարիամ անուն նորա։ Սա առեալ զկին իւր էած առ Հայրն իւր Մուշեղ, զի ինքն դէմ եղեալ էր գնալ 'ի Կեսարիա։ Եւ թողեալ զկին իւր անդ, և յանձն արարեալ զգաւառն այլոց աղատաց, և ինքն գնաց։ Իսկ կինն նորա յոյժ փափաքեալ էր սրբոցն՝ որ 'ի Գլակայ վանսն, և ուխտի Կարապետին։ Յաւուր միում առեալ զփոքրիկ մանկիկն իւր անդրանիկն՝ որ էր յիստեան, գայ բազում յօժարութե՛ 'ի դուռն Կարապետին։ Զգաչէր բազում անգամ զկրօնաւորսն, զի թոյլ տացեն նմա մտանել յեկեղեցին։ Իսկ սպասաւորքն արգելուին զնա. բայց զփոքր մանկիկն Ստեփաննոս առեալ 'ի գրկաց նորա, բերեալ առաջի սեղանոյն երկրպագեցուցին՝ զն, և բերեալ էառն ցմայրն իւր։ Իսկ նորա առեալ՝ սկսաւ արտասուել,

1 Յերիս օրինակս Ն 'ի հայրապետութե՛ Թոդկայ։

և ողբալով ասէ. Վա՜յ ինձ մեղաւորիս, որ զրկեալ եմ 'ի բարեաց. ողբացէք զիս ամ կանայք, տեղի տուք արտասուաց իմոց ամ ձայնարկուք։ Օ՜ա՜ծկեա՛ցէն զիս լերինք, և ողբմեսցին ինձ բլուրք. գազանք եղկեսցեն զիս, և թռչնոց ազգք խիթասցեն ընդ իս։ Հրեշտակք ապաշաւեսցեն զանձն իմ, և դևք բուսնեալ յարձակեսցան 'ի վերայ իմ։ Ողբմեցարո՛ւք ինձ ո՛վ ամ սպասաւորք Կարապետիդ, և տուք տանել զիս 'ի տաճար անդր։ Այս դարձեալ ցմանուկն ասէր. Ո՛վ որդեակ, ընդէ՞ր բաժանեցար 'ի գրկաց իմոց. զի՞արդ ոչ ողորմեցար մօրս քո. ո՞չ ես ծնայ զքեզ, և ո՞չ ես մնուցի զքեզ. և զի՞արդ թողեր զիս միայն։

Այս զայս ասացեալ կնոջն, հանեալ բազում անուշահոտ խունկս տայր սպասաւորացն, և գանձս բազումս 'ի սպաս ամ եկեղեցւոյն։ Այս պատգամս յղեր առ հայրն Թոդիկ, զի առեալ զիրսն՝ և զնա թողցէ 'ի ներս։ Այնուհետև ասէ. Ես զայդ հրաման առեալ եմք յառաջնոցն, և ոչ իշխեմք առնել. արդ եթէ վասն հաւատոց ես, ընդունելի է քեզ այդ աշխատանքդ։ Արդ մի՛ վասն պատասխանւոյն ձանձրանար 'ի մէնջ, այլ երթ 'ի խաղաղութիւն։ Իսկ նա ասէ. Ես այդ պէս. այլ եթէ վասն իշխանութեան է, ես ոչ երկնչիմ 'ի ձէնջ. իսկ եթէ վասն թշնամութեան Կարապետին ընդ մեզ, և ո՞չ ինքն 'ի կնոջէ ծնաւ, և ամ ինքն 'ի կնոջէ է ծնեալ. և ո՞չ առաքեալք և մարգարէքն մայր ունէին։ Արդ ես մտանեմ ո՛վ ամ, և զմայրն քո բարեխօս ունիմ ինձ. մի՛ առներ յիս զցասումն բարկութեան քո, զի մի՛ եղէց նշաւակ աշխարհի. զի եթէ դու զկնոջ կաթն ուրբեր, գանեա և զիս տաճարիս արժանի արա։ Այս զայս ասացեալ՝ եմուտ 'ի տաճարն, և համբուրեաց զդրմ տաճարին. և գնաց առաջի սրբոյ սեղանոյն, և ծունր կրկնեալ՝ ասէ. Տէ՛ս, ամ, զբեկեալ սիրտ իմ, և ողորմութի՛ն արա վերաւորելոյս. զի դու ոչ յիշեցեր յողորմութեան զբարկութի՛ն քո. արդ օրհնեալ եղիցի անուն քո յաւիտեան։

Այս իբրև եղ անտի տիկինն, խատացին [1] ոխացան և տրտմեցան յոյժ ընդ իրսն սպասաւորքն եկեղեցւոյն;

1 Ցերկուս օրինակս խանդացին։

և ոչ պատրաստեցին կնոջն կերակուր։ Իսկ նորա հրամայեալ սպասաւորաց իւրոց՝ Ճաշ առնել կրօնաւորացն, և զամենեսեան 'ի սեղանն կոչել. և էին արք երեքհարիւր ինսուն և հինգ։ Եւ յորժամ Ճաշեցին, ասէ տիկինն. Ո՛վ սրբասէրք և փոյթք յաճախին մշակութիւն, ուրախ լերուք ընդ իս 'ի Տէր, զի նեղեաց ինձ, և կատարեաց զփափաքումն սրտի իմոյ. արդ օրհնեցէք զիս և սփոփեցէք 'ի խաղաղութիւն։ Եւ յառաջ եղեալ գնացին։

Իսկ եկեղեցպանն և մի ոմն 'ի կրօնաւորացն գնացեալ առաջի սրբոյ սեղանոյն, ասէն. Ո՛վ Տէր, և դու ներեա՛ս կնոջն՝ որ զայն գործեաց. և այլ կանանց ըզնոյն խրատ համարձակեալ հատանէն. արդ արա զնոսա շան քո զօրութեդ, զի վկայ լինիցի ազգաց, և վկայ և օրէն բազմաց։ Եւ իբրև յուղարկէին զկինն՝ ելանել ընդ փոքր զառ'իսլերն 'ի հարաւոյ կուսէ վանացն, որ 'ի գլուխ Ա՛ղարդակայ[1], և հայի 'ի փոքր ամրոցն Ա՛ՀԾամոր նեղբոյ Ա՛ղարդակայ՝ զոր Ա՛նդակն[2] կոչեն, եռեռս կինն 'ի հիւսիսական կողմանէն տեսուն զարմանալի. և ընկէց զմանուկն 'ի դայեակն, և ասէ. Ցեսանեմ այր մի գիսաւոր ընդ ամպս որոտացեալ, և ելեալ յեկեղեցւոյն գայ առ իս. տեսանեմ առնս սուր սրեալ և թացուցեալ[3] և յարեան ներկեալ։ Եւ ընդ բանսն եհար զնա, և անդէն սատակեցաւ։ Օ՜ որ տեսեալ ծառայիցն, ընթացեալ ազգ առնէին սպասաւորացն եկեղեցւոյն. և հայրն ելեալ բարկացաւ եկեղեցպանին, տրտմեալ յոյժ՝ բազում ժամն արտասուեաց։ Ա՛պա առեալ զսպասաւորսն տարաւ 'ի տեղին, և կազմեալ գերեզման, եդին 'ի նոյն տեղւոջն. և կանգնեաց խաչ քարեայ, և գրեաց 'ի նմա այսպէս.

ՈՐ ՈՒ ՑԱՆԴԻՆԵՍՑԻ ՄԱՐՏՆՉԵԼ

ԸՆԴ ԵԿԵՂԵՑԻ ԱՍՏՈՒԾՈՑ

ԱՑՍ ՍՈՒՐ ԵՂԻՑԻ ԸՆԴ ՆՄԱ

Եւ հաստատեալ կայ այս գրով 'ի նոյն տեղւոջն։

1 Յերիս օրինակս Սարդակայ։
2 Յօրինակի միում Արդակայ՝ զոր Արդամ կոչէն. իսկ յայլ երիս օրինակս չկայ։
3 Յերկուս օրինակս Բագուցեալ։

Իսկ զմանուկն առեալ էտ 'ի դայեակս մինչև յարբունս հատաւ. և ապա առեալ 'ի վանսն ուսոյց զնա, և հաստատեաց զնա հայր վանացն յառաջ քան զմահ իւր։ Իսկ հայրն նորա Իշխանն Լ.ծրունեաց մինչ դեռ գայր 'ի Կեսարիոյ, լուեալ զմահ կնոջն, ստրջացաւ. իսկ հայրն Թոդիկ մխիթարեաց զնա։ Լու նա խորհեցաւ շինել եկեղեցիս. բայց գնաց 'ի Մատրավանսն վասն նիւթ գտանելոյ, և անդ շինեաց եկեղեցի վայելուչ, և կոչեաց զանուն նորա վասն կրնոջն՝ սուրբ Լ.ծածին, և զարդարեաց զնա հրաշալի սպասիւք և կազմուածք։ Գոյնպէս և զբռ Կարապետն 'ի Գուգակայ վանսն մեծաշուք փառաւք զարդարեաց։

Սա դարձոյց զԿուառն 'ի Կարապետն և զՊարեխ. քանզի Իշխան ոմն անօրէն՝ տանն մամիկոնենից՝ կորեաց զերկու աւանսն 'ի վանացն, և էտ գուստրի ումեմն կնոջ։ Օ՛ր, բարկացեալ հօրն Կիւրղի, անիծեալ զիշխանն վասն կորելոյ զգիւղսն 'ի վանացն։ Իսկ յետ ամսոյ միոյ 'ի յորս ելեալ, ընկէց զնա երիվարն, և եհան զոգին։ Բայց որդին Թէպէտ և էտ զաւանսն, այլ ոչ էտ 'ի նմանէ հայրն մինչև 'ի գալ այս Իշխանիս։ Լ.ըդ այս Իշխանս կշռեաց քսանևերկու հազար դահեկան, և էտ Իշխանին Ցարօնոյ. և գնեաց զԿուառս և զՊարեխ, և էտ զնոսա վանացն վՀռաւ. և երկու գիւղս յիւր գաւառէն, զԼ.ուտամետ և զգահ Իշխանացն [1]։ Իսկ զորդին Թողեալ առ Թոդիկ, գնաց 'ի գաւառն իւր. և 'ի վախճանիլն իւր՝ էտ տանել զինքն 'ի վանսն Ինանակեան, և կայ 'ի կողմ արևելից երեք քայլ հեռագոյն յեկեղեցոյն։

Ընդ այն ժամանակս սպանին զՄրմիզդ Պարսից արքայն, և Ջամբ Խոսրով որդի նորա եկն փախստական 'ի Յոյնս [2]. և կնքեալ Հաղկեդոնի հաւատովն [3], դարձաւ զօրօք 'ի Մօրկայ առ Պարսից գոր

1 Յերիս օրինակս Ա.Բ.Գ.Դ.Ե.Զ.Ը.Ա.Ն.Ա.Ն.Ա.Ն

ծաւորքն, և զերկիրն իւր առնոյր։ Բ. Զդ մինչ 'ի Յու-
նաց գայր Խոսրով, առեալ զՄ՝ուշեղ զտէրն Մշոյ և
Խութայ Տարօնոյ իշխանն և Սամոյ՝ հրամանաւն
Մ՝օրկայ, տարեալ 'ի Պուլին, և Հայոց մարզպան
հաստատեաց՝ տուեալ 'ի ձեռս նորա զզօրս Հայոց ե-
բեսուն հազար. և ինքն առեալ զզօրսն Յունաց եւ
Թանասուն հազար, գնաց 'ի Բ՝ահել Շ՝ահաստան[1]։
Եւ ընդ Հայոց զօրսն հպարտացան բնակել Յոյնքն,
անցին գնացին աւուր միոյ Ճանապարհ 'ի դաստա-
կերտ, և անդ իջին։

Իսկ Ղ՝ևիսորձէս, որ զՊրմիզդ եսպան, գումա-
րեալ զզօրս Պարսից ութսուն հազար, և եկն 'ի վե-
րայ Մ՝ուշեղայ։ Իսկ քաջն Մ՝ուշեղ քաջալերեալ
զզօրսն, հաղիւ հաւանեցոյց մտանել 'ի պատերազմն։
Եւ բանս 'ի բերան Հայոց զօրացն Մ՝ուշեղ իշխանն
մամիկոնենից և Հայոց մարզպան, 'ի բարեխօս և 'ի
յօգնութիւն զնոր Կարապետն կոչել. և միաբան զայս
բան ասացեալ, յարձակեցան 'ի վերայ զօրացն Պար-
սից. և ետ նոր 'ի ձեռս նորա զթշնամին։ Զ՝որ գի-
տացեալ Մ՝ուշեղայ՝ թէ նա է թագաւորն, նմա մա-
տեաւ. և սկսան բախել իրերաց։ Զ՝որ վաստակե-
ցաւ յոյժ Մ՝ուշեղ. սակայն զմահ և զկեանս առաջի
եդեալ, բարձեալ զմուրճն 'ի վեր՝ ի՛ջոյց 'ի վերայ
գագաթանն Ղ՝ևիսորձիշի, և ուղեղն ցնդեալ ընդ
քիթն ի՛ջանէր։ Եւ կտրեաց զգլուխն, և ձգեաց 'ի
մախաղն իւր. և յորդորեալ զզօրսն 'ի պատերազմն,
և զօրացեալ զօրացն, առաջի եդեալ զնոսա 'ի փա-
խուստ, և կալան 'ի նոցանէ քառասուն և ութ իշխան
կենդանւոյն. և համար կոտորածոյն ոչ երևէր՝ վասն
բազմութեն։ Իսկ արա հազար ընդ իշխանացն ըմ-

դի նորա միածին, և 'ի հոգին նը-
ցոյ. և անարգեալ 'ի բաց զկռամոլ
ամբարշտութիւնն, խոստովան եղև՝
թէ ոչ գոյ այլ ած բաց 'ի միոյն
միոյն, զոր քրիստոնեայք պաշտեն։
Եւ ապա աւազանին սրբոյ վերըս-
տին ծննդեան լուսաւորութեամբ
հաղորդի կենդանարար մարմնոյ և
արեանն նոր։ Եւ ողջունեալ զնը-
աւետարանն Քրիստի համբուրմամբ,
յետ երից աւուրց վախճանի 'ի
բարեբոյ ծերութիւն։ Եւ բարձեալ
զմարմին նորա քրիստոնէից նուի-
րական սաղմոսերգութիւն և քահա-
նայական գտաւոր, տարեալ դնեն
'ի Հիրիսն Թագաւորացն։

1 Յերիս օրինակս գնացին 'ի Բալ-
խասան։

բռնեալ, և մեծաւ յաղթութիւն դարձաւ 'ի պատերազմէն։

Այլ երբև ազդ եղև առ Թագաւորն Խոսրով, և խնդաց յոյժ. իսկ զօրքն Յունաց տրտմեցան սաստիկ ամենեքեան։ Երբև կոչեաց Թագաւորն զՍուրեն, և պատրաստեցաւ տալ պարգևս ամ զօրացն, յղեաց առ Խոսրով արքայն Մօրիկ, քանզի զնա Թագաւորին փոխարէն էին կացուցեալ. Այնմ գիտէս դու զայդ, որ արքայի մահու սպառնայ Սուրեն։ Իսկ նա խորհեցաւ դարան մահու գործել նմա, և արձակեաց կոչել առ ինքն զՍուրեն. և քոյր Խոսրովու իմացեալ, ազդ արար Սուրենայ զնենգուն եղբօրն։ Իսկ Սուրեն առեալ ընդ իւր քառասուն իշխան, առանց այլ ուրուք, կազմեցան զօրէն պատերազմի. և սուսեր պատերազմի ընդ մէջ ածեալ, այնպէս եկին առ Թագաւորն։ Այլ եկեալ երիվարօքն մինչև 'ի դուռն խորանին, և ամ խստութիւն տուեալ պատասխանի, և 'ի լոյս ածեալ զմահու դարանն, թքակոծեցին զնա, և զանմտութիւն նորա պարսաւեցին. և յարուցեալ մեծաւ բարկութիւն իշխանաքն հանդերձ, եկ 'ի Թագաւորէն։ Երբև լուաւ զայն Թագաւորն՝ երկեաւ, քանզի մանուկ էր։

Իսկ իշխանն Սուրեն արձակեաց առ Յունաց զբարեարն, և ասէ. Կամեցայք դուք սպանանել զիս նենգութիւն, արդ մի՛ զարթուցանէք զառեւծ՝ որ 'ի քուն է, և մի՛ զգայլ՝ որ զիւր բարն մոռացեալ է. ապա թէ ոչ, այն որ զութսուն հազարսն յաղթահարեաց, կարող է և զեւթանասուն հազարսն սատակել։ Այլ ինքն թողեալ զզօրսն 'ի Դուին, 'ի բաց եկաց 'ի մարզպանութենէն. և առեալ զզօրս իւր, որ 'ի մամիկոնեան տանէն էին, եկն 'ի դաւառ իւր։ Այլ յետ սակաւ ամաց եսպան Փոկաս զՄօրիկ, և ինքն նստաւ յաթոռ նորա։

Իսկ Խոսրով գնացեալ վրէժինդիր Մօրկայ, և եկեալ անցանէր ընդ Կարնոյ քաղաքն. և արձակէ առ Սուրեն իշխանն Տարօնոյ պատգամս, և ասէ. Լաւ եկ ընդ իս 'ի դուռն Թագաւորին Յունաց, լինել վրէժինդիր Մօրկայ մահուանն. ապա թէ ոչ, 'ի դառնալն իմ՝ զերկիրդ քանդեմ, և զքեզ կապա-

նոքա տանիմ 'ի դուռն արքունի, կնաւ և որդեաք։ Իսկ նա ոչ ինչ յղեաց պատասխանի առ նա, այլ սկսաւ ամրացուցանել զգաւառն։ Եւ իբրև գնաց Յոսրով, էառ աւար և գերութիւն յերկրէն Յունաց. և անցեալ գնաց 'ի կողմանս Խասենոյ, 'ի Դուին և 'ի Հեր և 'ի Բահլ։ Բայց յորժամ եկին 'ի Կարին, առաքեաց Յոսրով զՄիհրան 'ի Տարօն առ Մուշեղ իշխանն, զի կալցէ զնա և տարցէ 'ի պարսիկս։ Եւ հրամանն տուեալ, զտեղիսն՝ յորս նա զհաւատսն ունէր՝ [1] կործանել, և զկրօնաւորսն սպանանել. որոց եկեալ, զիրսն կատարէին։

ԳԼՈՒԽ Բ.

Պատմութիւն Պարսից. և գալն Միհրանայ 'ի Տարօն երեսուն հազարաւ, և կռուելն զնոսա Գայլուն Վահանայ յՕձ քաղաքի. և դառնալն առ Միհրան աւերն Մշոյ, Գալէրայ, Խութայ, Շապխոյ, և Սանոյ։

ՅԱՌԱՋԻՆ ամին Թագաւորութեանն Փոկասու, յորժամ սպանաւ Մօրիկ արքայ դաւով 'ի ծառայէ իւրմէ՝ որ և նստաւ յաթոռ նորա, յիշեաց Յոսրով զուխտն Մօրկայ՝ որ 'ի մէջ նորա և իւրն, և եկն էանց 'ի Յոյնս չորեքտասան բիւրօք. և բրեաց բազում աւանս և գաւառս, և դարձաւ։ Իսկ զՄիհրան քեռորդին իւր առաքեաց 'ի Տարօն երեսուն հազարաւ։ Եւ իբրև եկն նա 'ի գաւառն Հաշտենից, կալեալ զսմն առաջնորդ իւրեանց՝ անցեալ եկին մինչև յԱ.ռ.ձանն քարեայ։ Իբրև ընթերցան զգիր արձանին, խորտակեցին զնա. և ինքեանք ութ հազար այր անցին 'ի Մեղտի և յԱ.ստեղունս [2] ամրոցն. իսկ քսանեւերկու հազարն դեռ յԱ.ռձան անդր կային, գիտելով զփախստականսն։ Իբրև գիտացին արքն երեթն, որք

1 Յերկուս օրինակս զԳէրիսն, հաւատքէր։ զոր նա հաւատք ունէր. և յայլում 1 Յերիս օրինակս յԱՓէրիսն։

խոտաձարակքն էին, եկին 'ի վանսն, և զամենեսեան փախուցին զկրօնաւորսն։ Ոմանք փախեան, և ոմանք մնացին. բայց Պօղիկարպոս զամենեսեան յուղարկեաց յամուրն Ողկան, և 'ի տեղւոջն զՀայրն միայն զԹոդիկ արգել, և զսպասաւորսն եկեղեցւոյն. և հրամայեաց սպասաւորացն՝ տէրունական մարմնոյն կազմել զանձինս։ Իբրև մատուցին զպատարագն եւ թանեքին խոտաձարակքն, և հրամայեցին նշանագրի միւմ՝ որ եկեալ էր 'ի Յունաց՝ գրել զառ յինքեանց ասացեալսն. և ինքեանք տարածեալ զձեռս իւրեանց առաջի ՝ի սեղանոյն, և ասէն այսպէս.

Տէր ՝ի՛ծ զօրութեանց և արարիչ յաւիտենից, որ ստեղծեր զմարդն 'ի պատկեր քո բարերարութեդ, և կացուցեր զնա իշխան 'ի վերայ երկրի. և ետուր նմա զփառս և զպատիւ յաւիտենական անմահ։ Ուստի նախանձեալ բանսարկուին՝ մտին մեղք յաշխարհս, և 'ի մեղաց անտի մոռացումն, և 'ի մոռացմանէն կորուստ յաւիտենական. ուստի զորդեգրութիւնն, որ յայ էր, ջնջեցաք մեղացն ապականութ. ուստի փրկութեն Ճանապարհն բարձեալ էր, և մահ թագաւորեալ։ Այլ դու, ՝ո՛ր, գթացար 'ի ստեղծուածս քո ՝ի՛ծային ձեռացդ. առաքեցեր զմիածին Որդիդ քո 'ի փրկութեն աշխարհի, որ եկն և եղև մարդ 'ի կնոջէ 'ի մեր նմանութիս, և էառ զմեր պատժապարտութիւնս. դատապարտեաց զմեղս մարմնով իւրով, ելոյծ զանէծս նախաստեղծին Ադամայ։ Իբարձ զապականութեն մարմնոյն 'ի գերեզմանի, և իշխան գտոլով 'ի վերայ մահու՝ զմահ գերեաց, և զդժոխս աւերեաց. զարդելեալսն ազատեաց, և Ճանապարհս յերկինս ուղղեաց, առաջնորդելով ամենեցուն յառաջին յանմահական տեղիսն։ Ո՜այս ՝ա՛մ արարեալ, և զմարմին իւր ետ հաւատացելոց 'ի կերակուր, և զարիւն իւր ըմպելի, և զմահ նորա պատմել ՝ա՛մ հաւատացելոց։ Դու վասն անուան նորա զմահ առ ոչինչ համարելով՝ զանձինս իւրեանց մատնեցին տանջանաց և մահու, փոխարինի ակն ունելով 'ի միածնէ Որդւոյ քո, փառաւորելով զամենեցունց Հայր ՝ո՛ր։

Այսօր և մեք զանձինս մեր 'ի մահ մատնեմք և չարչարանաց և վշտի. այլ և վասն խոստմանդ, թէ որ

Ճանաչէն զիս՝ 'ի հալածանս կայցէն, զի «Ես եմ եմ, ասէ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի». և գիտեմք, թէ, զի ոչ անտես առնես զաղաչանս մեր, և ոչ ընդ վայր հարկանես զանձինս ծառայից քոց։ Տուր, թէ, փառս անուանդ քո վասն սքանչելեաց քոց, զորս ցուցանես առ փառաւորիչս անուանդ քո յաղագս և յաւիտեանց։ Մի տար օտարոտից զընակութիւն սիրելեաց քոց անհաւատիցն ժառանգել. և մի մեծաբանեսցեն հեթանոսք՝ թէ կործանեցաւ տեղի փրկութիւն նոցա, և ոչ ոք է՝ որ օգնէ նոցա. և ո՞ւր է թէ ած նոցա՝ յոր յուսացեալն էին։ Յիշեա, թէ, զգինս արեան քո, և փրկեա 'ի ձեռաց նեղչաց զհաւատացեալս անուանդ քո. զի ծանիցեն ազգք հեռաւորք զմեծութիւն քո, և յուսասցին յանուն քո ամենեքեան, որք երկիւղիւ ծառայեսցեն մեծութիւն քո։ Զմրացո, թէ, զժողովուրդս քո, հովուեա և բարձրացո մինչև յաւիտեան. պարսպեա, թէ, խնամատար աջովդ զոր փրկեցեր պատուական խաչիւդ քով, տալով օգնական 'ի նեղութիւն 'ի դէպ ժամանակի։ Զգեա, թէ, զամրաձածուկ աջ քո 'ի վերայ բանաւոր փարախիս այսորիկ, և մի տար զժառանգութիւնս քո բնակութիւն անհաւատիցն. եղիցի ձեռն քո 'ի զօրացուցանել զհաւատացեալսն, և որք դաւանեն և խոստովանին զանուն քո առաջի ազգաց անօրինաց։ Տուր, թէ. մասն ժառանգութիւն անձանց մերոց 'ի վերինն Երուսաղէմ. զի վասն քո մեռանիմք զօր հանապազ, և զանձինս մեր վասն քո անբաւ և անչափ մարդասիրութեդ 'ի մահ մատնեմք։ Այլ ինչ ոչ ունիմք պարտուց վճարումն, բայց յաշխարհի ատ նեղութիւն ունիմք։

Լուր, թէ, ձայնից մերոց, և խոնարհեցո զունկն քո 'ի մաղթանս ծառայիցս, բարեխօսութիւն քո Կաթողիկոսիս և Կրտչիս. և սորին ճգնութիւնս պահեա զեկեղեցիս հաւատացելոց անսասանելի և անդրդուելի, զի հաստատուն կացցէ հիմն հաւատոյս մերոյ 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից խոստովանութիւնն, մինչև երևեսցի արդար դատաստանն համօրէն աշխարհի։ Երևեսցի փառք քո, թէ, 'ի տաճարս յայս՝ զոր ընտրեցեր հիմնարկութիւն սրբոյն Գրիգորի, և բնակութիւն սրբոյ Կարապետիս. և կացցէ փառք՝ որ

Աղբորդութեն 'ի տեղի ասա։ Վասնզի սա է դուռն դժոխոց, և կապանք մահու. իսկ այժմ 'ի սմանէ մահ սարտուցեալ, երկնչի մերձենալ չարութիւն առ հաւատացեալս։ 'Ի սմանէ և դևք պատկառեցան, և մի դժրեսցեն զսպասաւորքն սորա, և որք գայցեն 'ի սմա։ Օ բազմութիւն դիւացն կապեսցես 'ի տեղւոջս յայսմիկ, զի խթեսցեն զծուլացեալսն յանծպաշտութենէ. բայց մի տացես նոցա իշխանութիւն՝ ըստ իւրեանց լրբութեն յարձակիլ 'ի վերայ հաւատացելոց։ Աղէցի և որք հաւատովք յիշեսցեն զանուն տր եկեղեցւոյս 'ի նեղութիւն իւրեանց կամ 'ի վիշտս կամ 'ի ցանկութիւն չարեաց կամ 'ի լկումն կամ 'ի գետավիժութիւն կամ 'ի գաղանաց բեկումն կամ 'ի վիհս անհնարս որոգայթից, դու տր ած մեր լուիցես նոցա, և զերծուսցես զնոսա յարժանահաս չարեաց անտի. քանզի քո արարածք են և գինք արեան։ Մի վասն մեղաց նոցա դատեսցես զնոսա, և վասն անօրէնութեն նոցա պատժապարտեսցես զնոսա. այլ գթութիւն քով խրատեա, որ անոխակալդ ես և ամենեցուն մատակարար ըստ իւրաքանչիւր պիտոյից։

Յիշեա զորս արեամբ քով գնեցեր, և մահուամբ քով որդեգիրս արարեր. մի եղիցի իշխան 'ի վերայ հօտի քո, և ապաստանիչ ժառանգութիւն վերին Սիոնի։ Տուր, տր, շնորհս բնակչաց սորա՝ որք պանդխիտութիւն կենաց գնան 'ի կեանս յայսոսիկ, և ոչ ըստ մարմնոյ գրգռանաց, և զմիտս իւրեանց յերկիւղ քո ունիցին. թող զմեղս նոցա, ջնջեա զյանցանս նոցա, բարեխօսութիւն սրբոյ Կարապետիս. և հեղմամբ արեան սորա՝ գրեա զնոսա 'ի դպրութիւն կենաց 'ի վիճակս արդարոց քոց։ Այո՝ աղաչեմք. եթէ մեղք մեծամեծք իցեն, 'ի կալ առաջի սրբոյ եկեղեցւոյս, և ունելով բարեխօս զհեղումն արեան սրբոյ Կարապետիս, և զմեր նահատակութիւն տառապանացս, հաշտեաց ընդ նոսա մարդասիրութիւն քով։ Մի անտես առներ զաղաչանս մեր, զի դու վասն մեղաւորաց իջեր յերկնից, որպէս ասացեր. "Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս"։ Արդ վասն մեղաւորաց աղաչեմք, և ոչ վասն արդարոց. զմեղաւորաց թող զմեղս, զհիւանդաց առողջացո զվերս. և որք ապաւինեցան

'ի կենդանութեանէ իւրեանց, և գործեցին զբարիս 'ի
նոսա եկեղեցիս, և որք սատարեսցին սրբոյ Կարապետիս
և կրօնաւորացս, և բազում մեղս գործեալ իցեն, և
առատաձեռնին 'ի մեղաւոր ընչից իւրեանց սրբոյ Կա-
րապետիս, նոյն ինքս Կարապետս լիցի փոխատու փո-
խանակ ապականացու ողորմութեան ըստ հաւատոյ նո-
ցա զպարտիս իւրեանց. մատակարարեա 'ի նոսա ա-
ռատապէս զթողութեան մեղաց։ Ա՛նասցէ զօրութիւն
աջոյ քո 'ի վերայ վիմիս այսորիկ, որպէս յառաջ հիմ-
նարկեցաւ քո զօրութիւդ, նոյնպէս կացցէ մինչև գաս
'ի նորոգել զերկիր։ Յայնմ աւուր գոցես զսա նորոգ
և անապական որպէս զխորանն 'ի հնումն, զի դու
կարող ես յամի. և զմեր մահս ընկալ, և յամ արա-
բածոց քեզ փառք յաւիտեանս։

Եւ յասել զամէնն, եկն ձայն յերկնից՝ որ ասէր.
Երկեցի ձեզ որպէս և կամիքդ. և որք վասն անուան ի-
մոյ և Կարապետիս պանդխտասցին, հատուցից նոցա
'ի գալստեան իմում, և զմեղս թողից նոցա. վասն
զի մարդասէր եմ առ ամենեսեան. դարձեալ և դուք
եկայք 'ի տեղիսն լուսեղէնս, զոր պատրաստեցիք
ՀԳնութեամբ ձերով։ Եւ լուեալ սրբոցն, երկիր պա-
գին առաջի սրբոյ սեղանոյն, և ելեալ արտաքս։ Եւ
գնաց Պօղիկարպոս առաջի սրբոյ խաչին, և անդ սկը-
սաւ աղօթել և աղաչել զՅԾ վասն խաղաղութեան ամ
աշխարհի, և զեկեալ թշնամին խորտակելոյ, և աղ-
քատաց մնալ 'ի տեղիս իւրեանց։ Եւ յանկարծակի
հասին զօրքն Պարսից. իբրև տեսին զՊօղիկարպոս,
վաղվաղակի հատին զպարանոց նորա և ընկեցին ա-
ռաջի խաչին։ Եւ ինքեանք փութապէս եկին մինչև
'ի դուռն եկեղեցւոյն, և տեսին զկրօնաւորսն յար-
տասուս և յաղօթս պարապեալ. և յարձակեալ 'ի
վերայ զեւթանեքեանն կոտորեցին։ Որոց անուանքն
են այսոքիկ. Թէոդիմաս, Պօղիկարպոս, Սիմէոն,
Յոհաննէս, Եպիփան, Դիմառիոս, Հնարկիոս[1]։
Սոքա եւթանեքեան կատարեցան 'ի զօրացն Պարսից
Ա՛ի հրանայ, յամենեանն քաղաց՝ որ օր չորրորդ էր, յա-

1 Յերկուս օրինակս Նարէոս։

ւուր հինգշաբաթի յիններորդ ժամու. և ինքեանք մնացին 'ի տեղին մինչև ցառաւօտն։

Բայց զգուռն եկեղեցւոյն ոչ կարացին գտանել, զի ծածկեաց որ 'ի նոցանէ. և սկսան մրձօք հարկանել, և ոչ գտին։ Այլ զարհուրեալք 'ի դիւաց՝ փախեան 'ի տեղւոջէն, զի գիշեր էր. և մարմինք սրբոյն անկեալ կային 'ի տեղւոջն զերիս աւուրս անթաղ, քանզի փախեան ամենեքեան։ Այլ յետ երից աւուրց եկին սպասաւորքն եկեղեցւոյն, և հայրն Լեոդիկ. և տեսեալ զնոսա՝ զի վախճանեալ էին, յարտասուս եղեալ՝ տրտմեցան յոյժ։ Այլ առեալ զնշխարս նոցա ինքուցին 'ի կողմն հարաւոյ 'ի մէջ դրախտին, և անդ փորեցին զերկիր, և ինքուցին զնոսա 'ի գերեզման առ Նոտոն և Կրօնիդէս, որք զկնի սրբոյն Գրիգորի եալ էին 'ի Կեսարիոյ. և կանգնեալ նշան տէրունական 'ի վերայ նոցա, բազմաց բժշկութիւն լինէր 'ի տեղւոջն։

Իսկ ոմանք հասեալք 'ի Մուշեղայ իշխանէն՝ տեղեկանալ վասն զօրացն, իբրև տեսին զնոսա կոտորեալս՝ հիացան. և փութանակի երթեալ պատմեցին զիրան իշխանին Մուշեղայ։ Այլ նորա լուեալ, զաւուրս երիս իբրև զմեռեալս դնէր անխօս։ Իսկ զօրքն մատուցին նմա թուղթ քրիստոնէական օրինօք և միաբարութիւն, ասելով. Ահմարիտ շառաւեղ երանելի յուսոյն, երջանիկ ասպարապետ, մի տրտմիր վասն նոցա. զի աղօթիւք իւրեանց՝ ամենայն աշտարակ եղեն աշխարհի, բարեխօսք և օգնականք մեզ առ ած։ Բայց դու առաւել գոհութիւն մատո ՝այ, որ 'ի քում ժամանակի յայնքան աստիճան առաքինութիւն հասին, և հանդատեամբ փոխեցան առ ած մարտիրոսական մահուամբ յաշխատութիւն 'ի հանգիստ, 'ի խոտաբուտ կենաց 'ի դրախտն փափկութիւն, և մեզ միշտ բարեխօսք։ Երդ արի սթափեաց, և զեկեալդ 'ի վերայ մեր զԻհրան յուղարկեացես։ Իսկ նորա որպէս 'ի քնոյ զարթուցեալ, հրամայեաց կոչել առ ինքն զԱհան, զոր իշխան էր արարեալ զնա Տարօնոյ մինչ ինքն Հայոց մարզպան եղև։ Այլ ասէ ցնա. Որ դեակ Ահան, դու գիտես զաւուրս կենաց իմոց, զի այս հարեւր և քսան ամ է՝ որ ես պատերազմ եմ

մղեալ, և սլաքով եմ սրբեալ զարիւնն 'ի Ճակատէս փոխանակ քրտանցն. ուրթսունեւերեք ռազմ անձամբ իմով եմ կարգեալ և մղեալ։ Այս այժմ ծեր եմ և դողդոջոտ, և օգնական իմ ՝ն ծ է և դու, և ոչ այլ ոք. զի որդին իմ մեռաւ երկոտասանամեայ[1]։ Այս արդ, որդեակ, դիր զայս 'ի մտի քում. զի եթէ 'ի վերայ քրիստոնէից մեռանիս և եկեղեցւոյ, մարտիրոս ես. իսկ եթէ 'ի վերայ մարմնաւոր ընչից իջանես 'ի մարտ, և այն քաջութիւն է. զի ես այլ ժառանգ ոչ ունիմ, և երկիրս քեզ եղիցի, և զաւակի քում յետ քո։ Արդ արի և գնա, և իմաստութիւն որսա գնա, և թո Կարապետն եղիցի քեզ օգնական և պարիսպ, և աղօթք սուրբ կրօնաւորացն յաջմէ և յահեկէ։

Իսկ Ս՝ահան յանձին կալեալ զիրն, սկսաւ դեպ պանս կաղմել և առ նա յուղարկել, զի հաշտեսցի և գնասցէ։ Իսկ նա ասէ. Այլ մինչև զիշխանն Ս՝ուշեղ ոչ կալեալ տանիմ 'ի պարսիկս առ արքայն, ոչ գնամ աստի։ Իսկ Ս՝ահան արձակեալ, ասէ. Եթէ զերկիրս ինձ տաս տէրութիւն և իշխանութիւն, ես տաց զիշխանն Ս՝ուշեղ 'ի ձեռս քո. և ես ինքն առ քեզ գամ ապստամբութիւն 'ի նմանէ, և հատանեմ զերկիւղ 'ի պատեհութիւն։ Այս նորա արձակեալ կոչեաց, քանզի յօժար էր իրացն. և ինքն իջանէր 'ի Ս՝ուշն աւանի, և Ս՝ուշեղն յամուրն Ողկան։

Արդ այն զօրքն, որք զկրօնաւորսն կոտորեցին, անցեալ գնացին յԱ՝ստղոն ամրոցն[2]. կացին աւուրս երկու, և ոչ ինչ կարացին առնել. ապա գնացին առ Ս՝ԻՀրան, և մատուցին զՁամ ձև ամրոցին։ Իսկ իբրև եկն Ս՝ահան առ Ս՝ԻՀրան, և նա ինդրեաց 'ի նմանէ զԱ՝ստղոնս. և Ս՝ահան ասէ. Այդպէս, տեր. այլ տուր 'ի ձեռս՝ իմ չորեք հազար այր, որ գնամք 'ի վերայ ամուր բերդիցն՝ ուր մնեալքն նորա են և գանձքն. գուցէ բռնացեալ՝ ոչ տայցեն 'ի ձեռս իմ, ապստամբ զիս կարծելով. այլ այժմ երթիցուք նախ յ()ձ քաղաք, և ապա յայլ ուրեք։ Իսկ Ս՝ԻՀրան տուեալ՝ 'ի ձեռս նորա չորս հազար ընտ-

1 Ցերիս օրինակս երկոտասան ամէ։ ամաւքն. յայլսում՝ Ասպէղոս ամաւքն.
2 'Ի միւսմ օրինակի՝ Ասպէղոն որպէս և 'ի ստորև։

տիր առնեաձիոյ, և նորա առեալ տանէր մինչև 'ի դուռն ()ձ քաղաքին. և 'ի ներքսնեէնգուլթը դարան մահու գործեալ՝ 'ի ձեռս գալ զօրացն։ Եւ առ վաղիւն բանս արարեալ քաղաքին 'ի ներքս առնուլ զզօրսն Պարսից. և քանզի նուրբ էր մուտ քաղաքին, սակաւ սակաւ կարէին մտանել 'ի ներքս. և ոչք ընդդուռն յայնկոյս անցանէին, զայնս 'ի տունս արկեալ՝ 'ի զգեստիցն կողոպտէին, և զգլուխսն կտրէին. և արտաքոյ պարսպին յանէրևան տեղիսն 'ի խորսն լընուին։ Եւ 'ի ջրեքհազարէն յիսուն այր թողեալ էր 'ի Խարձ[1] կոչեցեալ գեւղն. և նշան տուեալ էր, թէ յորժամ զոք 'ի ձեզ յուղարկեմ, 'ի Մ'ինհրան գնացէք, և այլ զօրս ածէք։ Եւ այնպէս արարեալ, և յղեաց՝ թէ այլ զօրս տուր։ Եւ նոքա դարձան առ Մ'ինհրան, և առին 'ի նմանէ երկու հազար այր ընտիր, և եկին առ Ա՝ահան. և նա այնպիսի գործ հնարեաց, զոր ոչ կարացին գիտել պարսիկքն։

Ա՝ռդ յորժամ եկին 'ի դուռն Մ՝օրացն, Ա՝ահան զՊարսից զօրաց զերիվարսն և զհանդերձսն տուեալ էր քաղաքացեացն. 'ի դուռն կոչեաց զնոսա, և ետ խրատ՝ թէ յորժամ նոքա 'ի ձեզ հային, դուք միաբան 'ի քաղաքն դարձէք, և 'ի ներս մտեալ՝ զյաղթութիւն փոքն հնչեցուցէք. և զդուռն քաղաքին 'ի բաց թողէք, զի նոքա կարծիցեն՝ թէ առին զքաղաքն։ Եւ արարին այնպէս։ Ա՝ռդ իբրև տեսին պարսիկքն՝ զի դիմեցին նոքա միաբան 'ի քաղաքն, խնդացին յոյժ. և դիմեցին նոքա ևս 'ի քաղաքն, և սկսան մտանել։ Իսկ Ա՝ահան փութով ընդ առաջ եկեալ զօրացն, աւետիս տայր. և քսան այր 'ի պարսիկ զօրացն աւետաւորս առաքէր առ Մ՝ինհրան, թէ առաք զքաղաքն. և ինքն դարձաւ զհետ Պարսից զօրացն։ Եւ իբրև բազումք մտին 'ի քաղաքն, և այլքն դեռ մտանէին, սկսան կասկած առնուլ զիրացն, և կամէին յետս դառնալ։ Իսկ Ա՝ահան զհետ մտեալ, սկսաւ կոտորել, և 'ի մօրսն ընուլ. և ինքն աստի, և քաղաքացիքն անտի քառասուն այր մօրահեղձ արարին. և զայլսն 'ի քաղաքն արգելեալ, կտրել տայր

1 Ցերկուս օրինակս 'Ի Հարց։

զգլուխն. և 'ի պարիսպն հանէին։ Եւ արարեալ համար յաւուր յայնմիկ, գտին զգլուխս վեց հազար, պակաս երկու։ Եւ հրամայեաց զամենեցուն զքիթսն կտրել և զթլփատսն, և արկանել 'ի մախաղ։

Եւ ինքն առեալ զոզրս իւր արս եւթնհարեւր, եկն 'ի Ամուշն աւան. և երեքհարեւր այր թողեալ յանցս Ամեղուայ[1], և երկու հարեւր այր աշտենաւոր թողեալ 'ի Սանասայ 'ի Ծոմակն[2], և ինքն երկու հարեւր այր առեալ ընդ իւր, եկն առ Ամիհրան. և մտեալ 'ի սենեակն, խօսեցաւ ընդ նմա այսպէս և ասէ. Եւ փախստական եկի 'ի քո զօրացն առ քեզ. զի ոչ 'ի քաղաքն Թողին զիս, և ոչ աւարամանն ետուն մեզ. այլ և զիմ զօրսն 'ի քաղաքն արգելին, և ես փախստական գամ։ Իսկ Ամիհրան խորհեցաւ հազար այր արձակել 'ի վերայ նոցա. և Ամահան ասէ. Եւ 'ի քէն իսկ ապստամբեալ էն. քանզի զաւար քաղաքին և զկապուտն առեալ, և կամին 'ի Յոյնս անցանել։ Իսկ Ամիհրանայ առաւել բարկացեալ, հրամայեաց երկու հազար այր արձակել 'ի վերայ նոցա. և Ամահան խրատ տայր զօրացն՝ 'ի գիշերի մի՛ անցանել ընդ գետն Ամեղտեայ, այլ ի ջևանս առնել, և 'ի վաղիւն ապա գնալ. Զուցէ ոք թշնամի, ասէ, յարձակիցի. և դուք չէք ընդդել վայրուցն։ Եւ ասէ ցնոսա. Հազար այր գնացէք ընդ Ծոմակն[3], և հազար ընդ դաշտն։ Եւ տուեալ նոցա առաջնորդ, և ինքն եւ 'ի Ամիհրանայ, գնաց յուղարկել զնոսա։ Եւ իբրև գնացին յայն տեղին՝ ուր բաժանել հրամայեաց, առաքեաց հարեւր այր ընդ նոսա՝ որ ընդ Ծոմակն գնացին. և ինքն հարեւր այր առեալ, գնաց զկնինոցա։

Եւ իբրև գնացին յերեր գետոյն Ամեղտեայ, յայն կոյս ի ջրոյ զնոսա 'ի քուն առնել. և ինքն 'ի պատրաստի արարեալ զդարանակալսն, հրամայեաց ծառայքին՝ կարել զերիվարսն արօտոյ պատճառաւ, և զնոսա յանհոգս առնել։ Եւ յանկարծակի հնչեցուցին զփողսն յետոյ և յառաջոյ, և 'ի մէջ առին զնոսա.

1 Յերկուս օրինակս Մեղտեայ։ զեղէն Բողոյր 'ի Ծոմն։
2 Յերկուս օրինակս Երկու հարեւր այր աշտենաւոր 'ի Սանասայ 'ի Ծոմն։
3 Յերկուս օրինակս գարձեալ 'ի Ծոմն, որպէս և 'ի սորին։

և 'ի սակաւ ժամու բարձին զգլուխս նոցա, և 'ի գետ
անդր ընկեցին, և մի ոք ոչ կարաց զերծանել. և զե-
րիվարսն առաջի եղեալ, 'ի Ծովմակն անցուցին։ Եւ
մինչ նոքա զայն պատերազմն անցուցին և վճարեցին,
և յառաջան եկին այսոց, և նոքա դեռ չէին եկեալ
'ի Ծովմակն, և կային մնային մինչ նոքա եկին և յան-
հոգս եղեալ իջին, զի զայն խրատ տուեալ էր Ա՛ա-
հանայ։ Եւ ապա կալեալ զնեալս կամրջին, և ձայն
սաստիկ հնչեցուցին շուրջանակի զնոքաք, և սկսան
յանխնայ կոտորել զնոսա. և մի 'ի նոցանէ 'ի մօրն
թագուցեալ, հեծեալ յերիվարն՝ փախեաւ 'ի Ա՛ուշ։
Օ՛որոյ զհետ մնեալ երկուց ոմանց, և յայնկոյս գե-
տոյն ջաղխեցին զգլուխս նորա, և ուղեղն ընդ քիթն
իջանէր։ Եւ մեւս ընկերին առեալ աւազ մատուցա-
նէր, և ասէր. Պարսից խորտկարար, առ զաղս։ Եւ
կոչեցաւ անուն տեղոյն այնորիկ Ա՛ռաղս մինչև ցայս
օր. զոր և աւան իսկ շինեաց։ Եւ Ա՛ահանայ 'ի մօ-
րին տուեալ զնոսա, ոմանք այլ ոչ կարացին ելանել,
և ոմանք 'ի ջուրն անկեալ խեղդեցան։ Եւ զորս 'ի
ցամաքն սպանին, զքիթսն և զթլփատսն կտրեին և
պահէին, և զգլուխսն 'ի մօր անդր և 'ի դաշտն ընկե-
նուին։ Եւ ժողովեալ զերկու հազար երիվարսն, էտ
տանել յԵ՛զանց[1] բերդն, զոր դեռ Եզնուան կոչեն։

Եւ 'ի վաղիւն դարձեալ եկին առ Ա՛իհրան[2]. և
Ա՛ահան հրամայեաց ծառայից իւրոց՝ Ճաշ առնել,
և զԱ՛իհրան կոչել։ Իսկ նա վասն խօթութեանն պատ-
ճառանաց 'ի սենեակ մտեալ, զԱ՛ահան միայն թող-
զոյր առ իւր։ Իսկ Ա՛ահան դռնապան եղեալ, և զնշ-
խանսն ոչք գայլին դարձուցանէր, ասելով. Հայոց
մարզպանն չկարաց գալ 'ի Ճաշն։ Իսկ նոցա ժողո-
վեալ 'ի տաճար մի, ընդ գինի մտին. և Ա՛ահանայ
առեալ զմախաղն, ուր քիթքն և թլփատքն կային,
էտ բերել առաջի իւր։ Իսկ նորա զարհուրեալ, ասէ.
Օ՛ինչ է այդ, զորոյց տուր ինձ։ Եւ նա կարգաւ
պատմեաց նմա ստուգիւ, և մի բան ոչ թագուցեալ
'ի նմանէ զոր ինչ արարեալն։ Իսկ նորա բարկացեալ,
առեալ զտէգն 'ի ձեռանէ ծառային, և կամէր հար-

1 Յերկս օրինակս ՅԵ՛ՆՁՆ-ԲԵՐԴՆ։ 2 Յերկուս օրինակս առ ՆԻՒՐ։

կանել զԱՀան։ Եւ նորա ձգեալ զձեռն իւր 'ի սուրն՝ որ առաջի կայր, կտրեաց զթլփատն նորա, և եդ 'ի բերան նորա, և ասէ. Դու ես, որ թշնամանեիր զտէր, և զկրօնաւորսն իմ զսիւնսն աշխարհի սպանանել տայիր։ Եւ կտրեաց զքիթն, և ցուցանէր աչացն. և պատառեալ զփորն, ետ ծառային հանել զլերդն և դնել 'ի բերանն. և հարեալ զդանակն 'ի փորն, և ետ թողուլ 'ի ցից։

Եւ մինչ լոկ որ զթլփատն կտրեաց, ասէ. Տուր բանից նիշ և պատուէր 'ի պարսիկն՝ որ ՅԱպահունիս, և ես ապրեցուցանեմ զքեզ։ Եւ նորա տուեալ բանից նշան և պատուէր՝ բազում երդմամբ ասացեալ, զոր նա և նա միայն գիտէին։ Եւ իբրև ասաց զիրսն, առեալ զդանակն ետաւ 'ի սիրտն, և անդէն մեռաւ։ Իսկ ծառայիցն առեալ զարիւնոտ զդէսսն պահէին, և զգետինն մնքրեալ յարենէն, և կողմնեցուցեալ 'ի մահիճն, քնոյ պատճառանօք ծածկեցին։ Եւ ինքն կոչեաց զպարսիկ դպիրն Մ'ինհրանայ 'ի սենեակն. և ետ գրել ողջոյն և բանից նիշ[1], թէ յետ երից աւուրց եկ 'ի բլուրդ՝ որ 'ի վերայ Լոթ ձորոյն՝ հազար ամամբք միայն, զի տեսցուք զիրերարս։ Եւ դպիրն գրեաց որպէս ասաց նմա Ա՛հան, և եդ զմատանին Մ'ինհրանայ 'ի վերայ. և կոչեաց 'ի ծառայիցն Մ'ինհրանայ տասն այր հաւատարիմ, և ետ տանել ըզթուղթն առ Ա՛արշիր՝ որ զհազար այրն ունէր ընդ ինքեան, և Յ'ԱՀունիս էր. և առեալ զթուղթն գնացին։ Իսկ Ա՛հան կոչեաց զնուիրակն, և ասէ. Երթ կոչեա զայն անուն իշխան։ Եւ կոչեաց. և իբրև գայր իշխանն և մնանէր ընդ փողոցն խաւարչտին, միայն վեց այր աստի և անտի կային։ Եւ մինչ դեռ կամէր մտանել 'ի սենեակն, ահապարեալ ունէին զփոզիցն, զի մի ձայն ինչ բարձցէ 'ի մեւսն. և հարեալ դանակ 'ի սիրտն, 'ի մեւս այլ սենեակն ձգէին զդին. ուր և զնուիրակն և զդպիրն վասն պատճառանաց իբաց արկանել ետ 'ի բանտն։

Եւ ինքն սկսաւ կոչել զիշխանսն խաբէութեամբ 'ի խորհուրդ, և նենգով այնպէս առնէր. և եսպան

1 Յերկուս օրինակս ողջոյն և նշանաբան։

յաւուր յայնմիկ իշխանս ուԹսուն և վեց։ Եւ իբրև վՀարեցան իշխանքն, գնաց ինքն 'ի տաՀարն՝ ուր զօրքն էին Պարսից. և ժողովեաց զնոսա 'ի ներս, և զիւրն և զայլ գաւառին մարդիկն արտաքս էՀան։ Եւ ինքն սկսաւ զնոսա վտանգել բանիւ, ԹԷ արժան էր ձեզ զմարդարտապսակն զմարզպանին գողանալ. արդ հրամայեալ է՝ զձեզ զամենեսեան մերկ առնել, մինչև ցուցանէք։ Եւ հանեալ զամենեցուն զՀանդերձսն, արգել զնոսա 'ի տաՀարին, և 'ի մեւս այլ՝ արս Հազար ինՀարեւր և երիս։ Եւ փակեալ ըզդրունս տաՀարացն, եւ բերել զգլուխն Մ'ԻՀրանայ, կախեալ ընդ երդն, ցուցանէր նոցա ասելով. Ա.յս այն գլուխն է, որ խորՀէր զքեզ Կարապետն Հիմն 'ի վեր առնել, և զկրօնաւորսն Հրով այրել։ Եւ Հրամայեաց վառել զերկոսին տաՀարսն, և ասէ զնոսա. Դուք ինձ զնասակարքք էք, որք զտաՀարսն այլ յայրել էք 'ի տալ. բայց ԹԷ կամի՞ ած և սուրբ Կարապետն, ես զայս փայտս յապաշաւել եմ Թողեալ. սակայն ընդ ձեր և ընդ ձեր Թագաւորին կառափն Հանեմ. զի ես աշխատեալ եմ 'ի շինելն, և դուք մերկք էք և ցրտացեալք. բայց վասն իմ մեղայն ԹողուԹԷ և իմ Հարցն՝ ջեռարուք, ասէ, և մի ամաչէք. և տունքդ այդոքիկ՝ զերեզմանք ձեզ եղիցի շնորՀիւ Պարսից արքային։

Եւ բորբոքեալ բոցն ՀարպոՀն, մինչ զի քաղաքն արբեալ լինէր 'ի Հոտ ՀեՀՀերաց նոցա։ Եւ ինքն ժողովեալ զկապուտնոցա և զգանձս, և եւ տանել յամուրն Ողկան. և զիշխանն Մ'ուշեղ եւ ածել 'ի քաղաքն. և ինքն առեալ երեք Հազար այր, գնաց ընդառաջ Ա աշրայ։ Եւ երԹեալ 'ի վերայ լերինն, ընդ երիս դէՀն դարան գործեաց, և զդպիրն և զնուիրակն առաքեաց առ Ա աշիր անդ։ Եւ նոքա երԹեալ կոչեցին զնա, զի իջեալ էր յեզը Օ'ԻԻայ[1] ծովուն։ Բ.այց նուիրակն և դպիրն ինչ ոչ գիտէին յիրացն, զի Ա ահան ոչ եւ մօտիլ 'ի զօրսն, այլ առանձին յեւոյ գայն։ Եւ յորժամ զտաՀարն այրեաց, զնոսա 'ի պատՀառս իրացն յայլ վայրս առաքեաց, զի մի գի-

1 Յերիս օրինակս յԵզը ծովուն։

տասցէն զիրսն. նա և զՀանդերձս իշխանացն տեսեալ, կարծէին եթէ միհրանեանքն են։ Եւ դարձ իբրև գնացին, և զԱհանայ ասացեալսն պատմեցին, որպէս թէ յերեսաց Մի՛հրանայ, և առեալ Աշրայ հաղար և հարեւր այր, եկն 'ի վերայ լերինն։ Եւ իբրև մօտեցան 'ի տեղին, Աշիր արս հարեւր 'ի բացեայ եթող վասն այլ թշնամեացն, և ինքն եկն եմուտ առ Ահան 'ի վրանն, կարծելով թէ Մի՛հրան է։ Իբրև՝ եմտես զնա Ահան, և ասէ. Աշիր, զի՞նչ եդիք 'ի մտի. 'ի պարսիկ հաւատ կամիք դարձուցանել զերկիրս Հայոց։ Եւ հրամայեաց դռնապանացն՝ արգելուլ զզօրսն 'ի հեռուստ, և զԱշիր դանեաց սաստիկ, մինչև էառ բանից նշան զզօրսն կոչելոյ։ Եւ նա 'ի հարկէ ցաւոցն ետ բանից նիշ 'ի զօրապետն և առ իշխանսն՝ գալ 'ի տեղին փութով. և ետ գրել թուղթ պարսիկ դպրին, և կաշառեաց՝ զի այնպէս գրեսցէ, որ գայցեն զօրքն 'ի վաղիւն. Օ՛ի Յոյնք են 'ի գալ 'ի վերայ մեր, ասէ։ Եւ տուեալ զմատանին Աշրայ, և թուղթ յայն զօրն՝ որ հեռի կային, և դարձուցեալ կոչնակսս զօրացն այլոց, և զիշխանսն մի մի կոչել տայր, և զգլուխսն կտրէր։ Եւ ոչ իմացան այլ զօրքն, մինչև մի ոմն յիշխանացն փախեաւ և անկաւ 'ի բանակն իւր։

Եւ իբրև գիտաց Ահան՝ թէ յայտնի եղև իրքն, ազդ արարեալ այնոցիկ՝ որք 'ի դարանսն կային, և յարուցեալ նոցա 'ի յետին կողմանէ՝ փախստական արարեալ զնոսա 'ի բերդն կոյս Կոթ ձորոյ. և որ բուն յետինքն էին 'ի դարանի անդ, չյարեան իսկ։ Եւ արք բերդին ընդդէմ ելեալ, քարամբք և գլօք յանխնայ կոտորեցին զնոսա. և փախստականք եղեն արք հարեւր յԱ՛ղահունիսն։ Օ՛ որ տեսեալ դարանակալացն՝ յարեան 'ի վերայ, և կալան զնոսա. և ապա 'ի վաղիւն սկսան մեւս զօրքն Պարսից գալ 'ի վերայ բլերն 'ի նոյն տեղին։ Իսկ Ահանայ ընդ առաջ գնացեալ նոցա, ի՛ջոյց զնոսա, և ասէ. Զոտղէք զերիվարսդ, զի արածեսցին մինչև ցերեկոյ. և յերեկոյին ի՛ջանեմք 'ի դաշտն 'ի վերայ Յունացն։ Եւ նոքա հաւանեալ, արարին այնպէս։ Եւ դարանակալքն յանկարծակի դիմեալք, կտրեցին զերիվարս

նոցա 'ի զօրացն, և փախստական արարեալ անցուցին ընդ Ա.բածանի, և հանին 'ի Դաղբէ։ Իսկ զօրացն Պարսից տեսեալ, աղաղակեցին միաբան և ասեն. Ա՛յ մեզ, կորեաք։ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Կորի։

Իսկ Ա՛ահմանայ առեալ զզօրսն, իջուցանէ զնոսա 'ի ձորն բուն. յարեան դարանակալքն աստի և անտի, և առեալ զնոսա 'ի մէջ՝ կոտորեցին, ոչ ողորմելով ուրուք։ Եւ հրամայեաց արս քառասուն թողուլ զբուցատարս Պարսից արքային։ Եւ ետ տանել ըզգլուխն Ա՛ինհրանայ առ թագաւորն Պարսից, ասելով. Ա.յս մարզպանս Հայոց յորժամ եկն յերկիրս մեր, և զօրս հակառակեալ ընդ իրեարս՝ գունդ խրնդրեցին, և ոչ կարացին գտանել. և Յոյնք մեր [1] թշնամիք էին, 'ի նոսա ոչ իշխեցաք գնալ. և ձեզ ընդ ակամբ էաք, և ձեր զօրացն գունդ ոչ կայր. ապա կտրեցաք զգլուխդ զայդ, և խաղացաք։ Ա.յլ լուսաբ եթէ 'ի Հ՝ահաստանէ եկեալ էք 'ի Դոստր [2] քաղաք՝ յերկիր տափարակ և դաշտաձև, և գիտեմ որ գնդի խաղայք. առէք զգլուխս քեռորդւոյդ ձերոյ, և եղիցի դա ձեր գունդ ազգաց յազգս։ Եւ իբրև գնացին արքն քառասուն, և տարան զգլուխն Ա՛ինհրանայ առ արքայն Խոսրով, և նա խռովեցաւ պղտորեցաւ, ամաչեաց զամօթն յաւիտենից։ Եւ 'ի միւսում ամի խրոխտացեալ, այլ զօրս առաքեաց։

'Ի նոյն ամի 'ՊԷ Կարապետն, որ յիննակնեան տեղւոյն էր, փլաւ. զի շարժ խստագոյն եղև, վասն որոյ և տունք՝ որք 'ի ներքոյ նորա՝ 'ի շարժէ անտի փլան։ Իսկ եկեղեցին, քանզի հիմն 'ի վերայ նորա էր, շարժեցաւ և պատառեցաւ. զոր Ա՝ուշեղ Ցարօնոյ իշխանն, տուեալ գանձս բազումս, և հրամայեաց քառակոփս շինել։ Բայց ոչ ժամանեցին շինել որպէս արժանն էր. զի զօրքն Պարսից նեղէին զնոսա։ 'Ի սոյն ամի շինեաց Ա՝ուշեղ զՊԷ Կարապետն, և ինքն վախճանեցաւ. և կայ 'ի Թաղմանն առ Ա.ղծրունեաց իշխանին, 'ի կողմն արևելից Ճակատուն։

Եւ յետ վախճանելոյն Ա՝ուշեղայ՝ նստաւ յաթոռ

1 Յերկուս օրինակս յէր։ 2 Յերկուս օրինակս Բոստր։

իշխանութեան նորա Պ ահան, իշխանն մամիկոնէից տան։ Օ որ և բազում քահանայիւք և քսան եպիսկոպոսաք տօն ցնծութեամբ կատարեցին փրկական տեղեացն, ուր զՀաւատն ունէին, և 'ի դուռն սրբոյ Կարապետին, և 'ի վանս Գլակայ եպիսկոպոսին։ Այս ութեւտասն գեւղս ազատեաց և ետ եկեղեցւոյն, ընկեաց զանուանս նոցա յարքունի դիւանէն։

'Ի նոյն ամին վախճանեցաւ երանելին Յովսէփ, հայր վանացն Գլակայ. և կայ Թաղեաւ 'ի նոյն տեղւոջն, զոր Հայրբլուր կոչեն. որ է ընդ աջմէ եկեղեցւոյն 'ի հիւսիսոյ ընդ արևելս[1]։ Այս նստաւ յաթոռ նորա Մանկիկն Ստեփաննոս, որդի իշխանին Աբծրունեաց, որոյ մայրն հերձաւ. և կան 'ի Թաղման ծնօղք նորա 'ի նոյն վանսն։ Այս բազում ուղղութիւս գործեաց 'ի գաւառն Տարօնոյ, զի վերագոյն ունէին զնա քան զեպիսկոպոսն. զի հայր էր վանացն, և ընդ ձեռամբ իւրով ունէր երեքհարեւր լինսունեւութ կրօնաւորս. զի այնչափ առաքինի էր, որ ամենեքեան իբրև զՅովաննէս Կարապետն համարէին զնա։

Սա խնդրեաց 'ի Տէր Կարապետէն, կապել զբերանս գազանացն՝ որք բեկանէին զլուսաբերսն եկեղեցւոյն։ Այս բազում պարկեշտ վարուք իւրովք յանդիմանէր զիշխանն Հարքայ, որ ունէր զկին եղբօր իւրոյ. և ածեալ 'ի հաւան՝ կտրել 'ի կնոջէն, և արարեալ կրօնաւոր, ետ նմա շինել զեկեղեցին՝ որ 'ի Լիւին աւանի Այկեղեաց գաւառի։

1 Յերիս օրինակս ընդ Առեքեաց Բլուրն Բերն ասի 'ի Գլխի։

Գ. ԼՈՒԽ Գ.

Վասն գալոյն Վախտանգայ 'ի Ցարօն Երեսուն հազարաւ, որ և շինեաց զՊորպ քաղաք և զամուրն զԳահար, և կացեալ 'ի Գրդուռ ամս երիք։

Դարձեալ զօրաժողով եղև Խոսրով արքայ 'ի վերայ Յունաց երկրորդ անգամ, 'ի մտի կալեալ ըզմահն Միհրանայ քեռորդւոյն իւրոյ. և առաքեաց զՎախտանգ՝ զնորին հօրեղբայրն, Երեսուն հազար ընտիր առն և ձիոյ։ Իսկ նորա եկեալ 'ի գաւառն Աղպահունեաց, արձակէր հարկապահանսն 'ի Հարք և 'ի Հաշտեանք և 'ի Ցարօն։ Աւ որ գրեն գաւառապետքն. Լթէ Վահան տայ, և մեք. ապա թէ ոչ, ունայն գնայք 'ի մէնջ։ Այսոսիկ լուեալ Վաղտանդայ, խրոխտացաւ և ըմբոստացաւ. և թողեալ կողմնապետ յԱղպահունիս, և փքացեալ ալեօք եկն 'ի գլուխ Ցարօնոյ։ Աւ շինէ զաւերեալն Զիւնկերտ քաղաք մեծ. և փոխէ զանուն քաղաքին ըստ անուան կնոջն իւրոյ՝ զոր էած ընդ իւր՝ Պորպէս, այս ինքն համեղ։ Ցնկեաց այգիս և բուրաստանս. և փոխէ զատրուշանն 'ի դուռնն Կաթուղիկէին, զոր հիմնարկեալ էր սրբոյն Սահակայ։ Աւ 'ի վերայ լերինն Ցաւրոսի շինեաց ամրոց, և կոչեաց զանուն նորա Գարհար. քանզի անդ ումնք գահավէժ եղեն 'ի վերայ անասնոց, կարծելով թէ հեծեալք են։ Փոխէ զՈռոռոզ լեռնաբլուրն, յանուն որդւոյն իւրոյ Գոռէգուռոյ՝ Գոռգուռ[1], զբօսանալով յամարան աւուրսն 'ի վերայ նորա։ Աւ յղեաց պարգևս բազումս Վահանայ, և թուղթս՝ զայս ինչ.

Քաջ և հզօր բազկիդ Վահանայ սկայի, դիցն օգնականութիւնք ողջոյն։

Որ թէպէտ և ընդ մահ եղբօրորդւոյն մերոյ տրտմեցաք, բայց ընդ հզօր քո իմաստութիւնդ զարմացաք։ Աւդ ես եկեալ եմ վասն սիրոյ և խաղաղութեան, և

1 Յերկուս օրինակս Գրգռուռ, յայլսում Գգռուռ։

դու արի եկ առ իս, և երդուիր տալ զհարկ արքունի և կալ հնազանդ, և յառաջին պատիւն ձեր մնալ, և այլ ոչ մտանել 'ի նենգութիւն։ Ողջ լեր 'ի դիցն աջոյ։

Այս նա յղեաց նմա պատասխանի այսպէս.

Վասա և Թոյլ անձինդ Վ ախտանգայ, և խոզ քոյոց դասուց՝ որք զաղա Ճաշակէն, ողջոյն։

Զայլ թէպէտ ընդ մահն Ս՝ի հրամայ խնդացի, բայց ընդ անմտութիւդ քո լացի. որ զմահն նորա լսեցեր, և զիմ կորովութիւնս ծանեար՝ զոր ինձ ետ Ա՝ծ, զի՞ արդ իշխեցեր գալ 'ի վերայ եկեղեցւոյն Ա՝յ։ Զայլ թէ սէր եկիր առնել, զկինդ 'ի հետ ընդէր ածեր. մի՛ թէ որդի՞ խնդրես յերանայ մերոց. և եթէ սիրոյ պատՃառանօք եկիր, զիմ քաղաքդ էր շինեցեր և ամրոցս։ Զայլ գիտեմ զի սուտ ես, և իբրև զշուն քծնիս[1]։ Զարդ զկեանս քո առաջի մահու դիր, և յերկրէս արի եղ և գնա խաղաղութիւ. ապա թէ ոչ, զմահն՝ որ ընդ քեզ մնացանելոց է՝ զայն ամ՛ երկիր տեսանէ։

Այս նորա բարկացեալ առաքեաց վեց հազար այր 'ի վերայ նորա 'ի Ա՝ուշ։ Իսկ ումանք ազգ արարին նմա, և ասեն՝ թէ գայ Ա՝ահան 'ի վերայ քո վեց հազարաւ։ Այս նորա գիշերագնաց եղեալ, գնաց 'ի վերայ նոցա՝ որք իջևանեալք էին 'ի Ն՝ծմակն[2], և յանկարծակի էհար զնոսա սրով, և ոչ ժամանեցին ըմբռնել զերիվարսն։ Զանցի որդի նորա Ամբատ ընդ մէջ անցեալ, կտրեաց չորեք հազար երիվարս. և անցուցանէր յայն կոյս Զ՝բատանոյ, և հանեալ 'ի կողմն Հ՝աշտենից։ Այս երկերիւր ձի յառաջին յաղթութեանն աւարաւ մտան եռուն եկեղեցւոյն 'ի Գ՝ուլակայ վանսն, զի այն էր տուն նոցա հայրենական. և անդ կնքեցին զնա։ Իսկ Վ՝ահանայ տուեալ զնոսա մօրացն՝ զաղաւսն կռատրեաց, և զաղաւսն խոցոտեաց, և երկերիւր այր 'ի մօր անդր ընկղմեաց։

Իշխանն Հ՝աշտենից ունէր ընդ ձեռամբ իւրով երեք հազար վեցհարիւր այր, և իշխանն Պ՝ալունեաց երկու հազար և երկերիւր, և իշխանն Զ՝ըջուց երեք

1 Ցերիս օրինակս Գ՝ԻՔ։
Ցերկուս օրինակս Գ՝ԻՔԷՐԳՆԱՑ ԵՂԵԱԼ, ԳՆԱՑ ԱՌ ԱՆ՝ ՈՐ Ն՝ԾՄԱՅ ՅՈԳԻ ԵՐ, ՈՐ ԻՔԵԱԼ ԷԻՆ. ՅԱՅԼՍԱՄ ՀԱՍԱՆԷ ՆՈՅԱ 'Ի Ն՝ԾՄԱՆ, ՈՐ ԻՔԵԱԼ ԷԻՆ։

հազար, և իշխանն Լդինուտայ[1] հինգ հազար, և իշ-
խանն Ա՛ահան ութ հազար, և Ամբատ որդի նորա
վեց հազար. ընդ ամենայն քսանևութ հազար։ Ա՛յս
ամ զօրք կային ընդ ձեռամբ Ա՛ահանայ. բայց բա-
ժանեալ էր, և կողմնապահս թողեալ ամ տեղեացն.
և կային առ ինքն յաւուր յայնմիկ երեք հազար այր։
ԼՍ բազում նախճիրս գործեաց անդ իշխանն Հաշ-
տենից. զի աճապարեալ կորեաց զգլուխն Ա՛ահա-
նայ, և զզօրսն փախստական դարձոյց։ ԼՍ նեղեալ
զնոսա, մինչև յաղաչանս անկեալ՝ և հարկս խոստա-
նային տալ նոցա։ Իսկ Ա՛ահան ասէ. Ցուք 'ի մեզ
զգլուխն Ա՛ահանայ, և թողումք զձեզ։ ԼՍ զօրքն 'ի
բազում տարակուսանս լեալ՝ խնդրէին, և ոչ գտա-
նէին։ Ելա կալեալ զորդի նորա զԱ՛ահ, ետուն զԱ՛ա-
հան։ Իսկ իշխանն Հաշտենից յառաջ մատուցեալ,
ասէ. Կամ տուք զԱ՛ահան 'ի մեզ, կամ տուք երե-
սուն հազար դահեկան։ ԼՍ նոքա ետուն երեսուն
հազար դահեկան, և դարձան։ Իբրև ետես Ա՛ա-
հան եթէ գնան ամբողջ, զնախանձն այ նախանձեալ՝
յարձակեցաւ 'ի վերայ նոցա, և սկսաւ կոտորել զնո-
սա։ Իսկ նոցա զաղաղակ բարձեալ, ասեն. Ա՛ռ ինչ
դարձայք 'ի պատերազմ, ոչ աւելապօք։ ԼՍ կոչե-
ցաւ տեղին այն Ա՛ռինչս։ ԼՍ տարեալ ածեալ զնո-
սա 'ի դաշտին, կոտորած սաստիկ գործեցին. և որք
փախեանն՝ էին պակաս քան զհինգհարեւր այր. որք
երթեալ պատմեցին Ա՛ խստանգայ։ Իսկ նորա բար-
կացեալ, հրամայեաց գլխատել զնոսա՝ որք դարձանն.
և ոչ մնաց 'ի վերհազարէն և ոչ մի։

Իսկ Ա՛ խստանգայ 'ի ցասումն բարկութեան շար-
ժեալ վասն Ա՛ահանայ, առաքեաց դարձեալ զԱ՛ռս-
ուր 'ի վերայ ութ հազարաւ։ Որք եկեալ բանակեցան
յեզերս Ա՛ Եղտայ, և արձակեցին առ Ա՛ ահան այս-
պէս. Ա՛յ չարաբարոյ գայլ Ա՛ ահան. մինչ գիտես ե-
թէ ծառայելոց ես Ա՛ռեաց արքային, ընդէր այդ-
պէս յանդգնեալ անամօթիս։ Ա՛ռդ արի եկ առ մեզ,
և լեր հարկատու. ապա թէ ոչ, մեռանիս որպէս ըզ-
շուն։ ԼՍ նորա լուեալ զայն, առեալ վեցհազար այր՝

1 Յերիս օրինակս Ողնուպինաց։

գնայ 'ի վերայ նոցա ինքն և որդին իւր Սմբատ։ Իբ
րև կացին հանդէպ իրերաց, սկսաւ Աստուր Թշնամա
նել զԱհան, և գայլ կոչէր նմա։ Այս նա ասէ.
Ցերաւի է անունդ ինձ. քանզի դամ կոտորեմ, եր
թամ և այլ դամ։ Այս սկսան մարտնչել ընդ միմեանս։

Իբրև խմբեցաւ պատերազմն, ակն կալաւ Սմբատ
որդին Ա Ահանայ 'ի վերայ Աստուրայ, և պատահե
ցաւ նմա։ Իսկ Աստուր տեսեալ՝ եթէ պատանի է,
քամահեաց զնա, և ասէ. Արարապաշտ հարձորդի,
'ի բաց կաց, զի 'ի պատերազմող արան եղանեմ ան
ցանեմ։ Այս նա ասէ. Որդի սատանայի, յիրաւի է
անուն քո Աստուր. զի սուր քո չէ ինչ, և 'ի մարտըն
չել ընդ մանկանն՝ [1] ծանիցես զպարտութիւն քո։ Այս
ածեալ զսուրն՝ կտրեաց զգլուխ երիվարի նորա, և
զնա յերկիր ընկեց. և յարձակեալ՝ էառ զգլուխն 'ի
նմանէ. և 'ի վեր վերացուցեալ, ասէ. Փառք քեզ
Աստ և տբ Կարապետ, որ յաղթեցեր հակառակոր
դիս։ Այս մինչ դեռ նա զայն ասէր, տասն այր պա
տեցին զԱհան. որպէս որք զանտառն հատանեն,
այնպէս յանխնայ կոփէին և նոքա։ Այս սկսաւ պա
կասիլ Ա Ահան. և ձայն բարձեալ, ասէր. Ո՞ւր ես
Սմբատ որդեակ, հասիր յօգն ծերոյս։ Օ՛ի էր ա
մաց ութսուն և ութից։ Իսկ նորա քաջաբար 'ի վե
րայ յարձակեալ որպէս զարծիւ սրաթռիչ, ասէր.
Զգնեա մեզ տբ Կարապետ։ Այս անդէն եհատ ըզ
գլուխ որդւոյն Աստուրայ, և ընդ մէջ ձեղքեալ՝ հան
դերձ թիկամբն աջոյ 'ի բաց ընկենոյր։ Այս զօրացեալ
Ա Ահանայ, զվեց երիվարին գլուխսն կտրեաց. և մատ
նեաց տր 'ի ձեռս նոցա զզօրսն Պարսից, և փախուս
տական արարին զնոսա մինչև ցերեկոյն։ Այս 'ի յութ
հազարէն երեք հազար միայն գնացին առ Ա ախտանգ։
Այս նորա լուռ եղեալ մինչև ցմիւս առն. և՝ 'ի նոյն ա
մին վախճանեցաւ Ա Ահան քաջն վրէժխնդիր 'ի վե
րայ եկեղեցւոյ, և եառ տանել զինքն 'ի Գլակայ վանան.
և կայ 'ի Թաղման 'ի դուռն սրբոյ Կարապետին, ա
ռաջի սեմոցն։

Իսկ 'ի միւսում ամի զօրս կազմեալ գումարեաց

1 Ցերխ օրինակ ընդ Լոբձին։

Ա ախտանգ քսան հազար, և առաքեաց առ Ամբատ, եթէ կամ եկ՝ որ պատերազմիք, և կամ հնազանդեաց և տուր հարկս։ Իսկ նորա ժողովեալ տասն հազար այր, գնաց 'ի վերայ նորա յԱնդակ. և թողեալ զՀինգ հազարն 'Ի բլերն, որ կոչեն Ա՝ահու աղարակ, և ինքն գնաց հինգ հազարաւ ընդդէմ նորա՝'ի դրդռեալ զնա։ Այլ առաքեաց Ա ախտանգ տասն հազար այր 'ի վերայ նորա, կարծելով թէ ինքն միայն է։ Այլկին զօրքն, և 'ի գիշերի պատեցին զնա. և նա կամէր 'ի գիշերի ելանել ընդդէմ, բայց արգելուին զնա քահանայք դրան նորա։ Իսկ նա ասէ. Ա՝ստահ եմ յաղթ, թէ որովհետև ծառայեալ եմք սրբոյ Կարապետին միամտութեամբ, թէ ոչ թողու զմեզ 'ի ձեռանէ։ Այլ էլ ջահիւք 'ի վերայ զօրացն Պարսից. և յանկարծակի տեսին այր մի գիսաւոր, որ լոյս փայլէր 'ի հերաց նորա, և զաչս թշնամեացն կուրացուցանէր։ Զոր տեսեալ քաջին Ամբատայ, ասէ ցզօրսն. Վ՝աջալերացարուք, որդեակք, և մի՛ երկնչիք. զի՞նչ Կարապետն մեզ 'ի թիկունս հասեալ կայ, և ընդ մեր՝ ինքն պատերազմի։ Այլ մի՛ ոք անհաւատալի զկրսն կարծիցէ. զի ինքեանք սկսան մարտընչիլ ընդ միմեանս, և զմիմեանս սատակել. զի՞նչ պատերազմէր ընդ նոսա։ Այլ այնչափ կոտորեցին զնոսա, մինչև հեղեղատք արեանց ելանէին. որ և Ամիլ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ։

Այլ իբրև վՀարեցին 'ի կոտորելոյ զայնչափ բազմութիւնն, երկերիւր այր համարով թողեալ զրուցաբարս այլոցն վասն աւն՝ զոր տեսին 'ի գիշերին, զի և թշնամիքն ևս տեսին, և ինքն յուղարկեաց զերիվարսն նոցա 'Ի Ա՝ուշն աւան՝ առ որդին իւր, որ կոչէր ըստ պապ անուանն՝ Ա ահան կամսարական, զի զՀետևակս քաղաքին հեծեալս արասցէ, և յուղարկեսցէ փութով։ Այլ նորա կազմեալ հեծեալս երկու հազար և հինգ հարեւր, հանէ առ Ամբատ իշխանն։ Իսկ նորա խոյս տուեալ աւուրս ութ, և պատրաստեաց զզօրս իւր. և յետ ութ աւուրն եկն եհաս Ա ախտանգն 'Ի դաշտ անդր, և առ վաղիւն պատրաստեցան 'Ի պատերազմ։ Իսկ Ամբատ կտրեաց 'Ի գիշերին երկու հազար այր հեծելոց, և անցոյց 'Ի

տեղի Թագստեան զպարսկէն յետուստ կողմանէ, և 'ի բլէրն յայս կողմանէ երեք հազար։ Եւ յերկու կողմանէն ռազմ գաղտ կարգեաց. և ինքն զուԹ հազար արան բաժանեաց 'ի վեց ռազմն։ Եւ ընդ առաւօտան կազմեցան. զի մի զգաղտ դարանսն գիտասցէն, փուԹապէս 'ի դիմի հարեալ՝ շարժեաց զնոսա 'ի վերայ իւր։

Իբրև Ճակատեցան 'ի պատերազմն ընդ իրեարս, զառաջինն յաղԹահարեցին զՍմբատ։ Իսկ նորա 'ի բլուրն ելեալ, ասէր. Ո՞ւր էք քաջք, յառաջ մատիք։ Եւ յամ կողմանց 'ի վերայ յարձակեցան, և 'ի մէջ առին զզօրսն Պարսից. և խմբեցաւ պատերազմն ընդ իրարս, մինչ զի ոչ գոյր հնար Ճանաչել զմիմեանս, բայց միայն 'ի ձայն փողոցն և 'ի տեսս դրօշացն։ Իբրև 'ի դիմի հարան Ա՝ախատանգ և Սմբատ, ասէ Ա՝ախատանգ. Կաց հարՃորդի. Թէպէտ և զբաղումն ընՁէցեր, սակայն այսօր չարԺնուս 'ի ձեռաց քաջ արանցս, որ գէշ գէշ պատառէն զձեզ սուսերքք մեր։ Եւ Սմբատ ընդ մէջ անցեալ, էհատ և կտրեաց զսոնապանս բարձից նորա, և կարեվեր խոցոտեաց, և մերձ տարաւ յընկէնուլ զԱ՝ախատանգ։ Եւ նորա ձգեալ[1] զտէգն, էհար զկուրծս նորա. և ցցեալ, 'ի ներքս ոչ կարաց անցուցանել։ Եւ Սմբատայ ձայնս արձակեալ, ասէր. Սուրբ Կարապետ, յայտնեա և այսօր զքեզ ծառայից քոց. զի վասն քո մեռանիմք 'ի վերայ հաւատացելոցս Քրիստի։ Եւ բախեալ տիգաւ 'ի Թիկունս նորա, և անց ընդ զրահսն 'ի ներքս, և էհան ընդ սիրտ նորա։ Եւ հանեալ ըզսուրն՝ կտրեաց զգլուխ նորա, և ոչ կարաց ունել. զի զբաղում մարդկաւն վազեաց գլուխն Ա՝ախատանգայ։

Իսկ մի ոմն 'ի ծառայիցն նորա էառ զգլուխն նորա, և փախեաւ. և հասեալ Սմբատայ՝ էհար մըրՃոմն 'ի վերայ գագաԹանն, և գոգեաց զսաղաւարտն, և գլխոյն ոսկրն փոսեալ՝ տեղի տայր սաղաւարտն մըրՃին Սմբատայ, և հազիւ կարաց հանել։ Եւ նորա հանեալ ընկէց զգլուխն, և ինքն մեռաւ։ Եւ մեւս այլ ծառայի առեալ զգլուխն փախեաւ. և Սմբատ

1 Յերկուս օրինակս Իսկ նա զտէգն նգէալ։

զՀետ մտեալ, ասէ. Պարսիկք, մի անմտանայք. զի մինչև յայս անկաւ Ա՛խստանդ, որ սրտացաւ ծառայքդ զգլուխդ առեալ փախչիք. ապա գիտասջիք թէ ձեզ այդպէս պարտ է լինել։ Եւ ձգեալ ծառային զգլուխն 'ի կուրծսն Ամբատայ, և ասէ. Տար խորտ վեա և կեր զդա. վա՛յ ձեզ, որ այլ վաղ ոչ սպանէք։ Եւ Ամբատայ առեալ զգլուխն, և զՀետ մտեալ ծառային, ասէ. Ո՞ւր տիրատեաց պարսիկ, զգլուխդ քո ընդէ՞ր ոչ փոխանակեցեր տեառն քո։ Ո՞ւրդ որովհետև տիրատեաց էք, ես բառնամ զգլուխս քո 'ի քէն։ Եւ Եհար զնա տիգաւն 'ի սիրտն, և անցոյց զտեգն յայնկոյս. և ընկեցեալ յերիվարէն, կտրեաց զգլուխս նորա. և դարձաւ մեծաւ յաղթութիւն 'ի բլուրն։ Եւ զօրքն շուրջ պատեալ 'ի վայրին զպարսիկսն սպանին. և ոչ մնացին 'ի նոցանէ, բայց այնոքիկ՝ որք առ ուղտուցն բանակքն էին որք չորեքՀարիւր. զորս ոչ Հրամայեաց սպանանել, զի փախստականք էին. բայց էառ 'ի նոցանէ Հազար և քառասուն ուղտ, և ութՀազար ընդ ձի և ընդ ջորի։

Եւ իբրև վՀարեցաւ պատերազմն, Հրամայեաց ծածկել զնոսա 'ի ձորս և 'ի Հեղեղատս. և կոչեցաւ բլուրն այն Ա՛ՀՀու բլուր։ Եւ Ամբատ առեալ ըզզօրսն, գնաց 'ի վերայ քաղաքին Պորպայ 'ի գիշերի։ Եւ մտեալ զօրացն 'ի տունսն, զորս և գտին պարսիկս լեզուաւ՝ սատակէին. և զքիթսն կտրեալ 'ի շարի արկանէին, և բերէին առ Ամբատ։ Եւ Հաստատեալ զքիթսն, գտանէին սպանեալ պարսիկք՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանկտի՝ չորեք Հազար։

Իսկ զորդին Ա՛խստանդայ և զկինն առեալ տարան յԱ՛յծից բերդն, զոր յառաջ Ա՛ՐԾուիս կոչէին, 'ի պահել զնոսա անդ։ Եւ յղեալ առ Պարսից թագաւորն Խոսրով, և ասէ. Տուր ինձ երկոտասան տարեայ Հարկ, որ զօրքդ քո զԻմ երկրիս զնոսն և զՀացն կերան, և զփայտսն այրեցին, և զՁրոյ՝ զոր արբին ըզդինն, և զտաՀարացն զգինս՝ զոր իմ Հայրն այրեաց վասն քո Դայլ Ա՛ՀԱն. և դարձեալ զսապանի [1] գինսն վաթսուն Հազար դահեկան, որ զքո զօրացն

1 Յերկուս օրինակս դապին։

զդիշահոտ հալաւն և զարիւնաթաթախ հանդերձն լուանալ տուաք և ադաք։ Բայց թէ ոչ, դամ հաբեւր մարդով 'ի վերայ քո, և զ�պարսիկս գերեալ 'ի Տարօն ածեմ, և 'ի քո աստուածքդ շուն խառանեմ, որ փոխանակ դոցա հաջէն 'ի ձեզ։ Բրդ փութով, զոր ինչ ասացի քեզ, արձակեա. ապա թէ ոչ, տեսանես թէ զի՞նչ անդք անցանեն ընդ ձեզ։ Իսկ նորա լուեալ, ծաղը առնէր զՍմբատ. և ոչ գրեաց պատասխանի թղթոյն Սմբատայ։

Բայց եղբայրն Ս ախտանդայ Սուրէն, առեալ հաբեւր հազար դահեկան, և ինն հազար այր, եկն 'ի Տարօն՝ գնել զկինն և զորդին Ս ախտանդայ։ Եւ ընդ առաջ գնացեալ Սմբատայ, ընկալաւ զՍուրէն եղբայր նորա սիրով, և էած 'ի Տուշ։ Եւ կացեալ աւուրս տասն, խնդիր արար Սուրէն եղբօրորդւոյ իւրոյ՝ թէ ո՞ւր է։ Իսկ նոքա ցուցին զբերդն՝ թէ անդ է. և նա ասէ. Ընդ այծարա՞ծ է թէ դիւարաձ։ Եւ ծիծաղեալ Սմբատայ ընդ աղի բանն Սուրենայ, առաքեաց և եառ բերել զկինն և զորդին առաջի իւր։ Եւ իբրև ածին, ասէ Սուրէն. Իշխան հզօր 'ի վերայ աշխարհիս Հայոց, տա՞ս զսոսա Պարսից արքային տուրս։ Իշխանն ասէ. Պարսից արքային և մեռեալ շուն մի ոչ տամ, որ Ճաշ ուտէ՝ առանց գնոյ, թող թէ զդոսա։ Բայց դու գնել թէ կամիս, քաջ տամ. ապա թէ ոչ, գնացէք դուք երեքեանդ յԲրծրունիս այծ արածեցէք, և բերդին ծառայութիւն արարէք, և զիմ հացս կերայք աներախտիս։

Իսկ Սուրէն քանզի իմաստուն այր էր, ասէ. Ո՛վ բարեպաշտ և հզօր իշխան, թէ և զշուն դարապասիդ քո արածել տայիր, դեռ պարծանս է մեզ՝ որ 'ի դրան քում կայաք, թող թէ այծ արածել։ Բայց թէ լսէք մեզ, առէք 'ի մէնջ հարեւր հազար դահեկան, և երկու հազար ուղտ, և վեց պարսիկ ձի. և մեզ տուրս տուք զայս կինս և զմանուկս։ Իշխանն ասէ. Օ այդ՝ որ բերեալ ես, այդ մեր է. զի զքո գլուխդ կտրեմ, և զոր ունիս՝ յիս առնում։ Բայց թէ դոքա քեզ պիտոյ էն, դու քրիստոնեայ լեր և հնքեաց, և զիս առ և 'ի պարսիկս գնա, և դոքա քեզ. ապա թէ ոչ, ձեզ այլ հնար իմացէք։ Իսկ

Սուրէն բերեալ էտ զՀարեւր հազար դահեկանն և զուղտն և զձին առաջի, և ասէ ցիշխանն. Բ.ադիկ է տուրսդ։ Իսկ նա ասէ. Հաւանիմ տրոցդ, բայց հարեւր և ութսուն հազար փայտ են տարեալ 'ի Վրաքէոյ, և չորեքհարեւր հազար դահեկանի խոտ են կերեալ 'ի դաշտէդ, և վաթսուն հազար դահեկանի՝ որ զեղն և զեղջերու և զնապաստակ երկրիս որսացեալ են և կերեալ. զՋրոյ և զՀացի գինն Թողում։ Բայց զանոյշ գինին Բ.սորոց[1] և Սաղնայ և զՍոխրայ այս երկու տարի է՝ որ յինէն կտրեալ էին, և ինքեանք արբին, զայն Թող տան. և զվեց գաւառին հարկն՝ զոր առեալ են, և զքաղաքին մուտն՝ զոր կերեալ են չորեքհարեւր դահեկան, զայդ ամ Թող բերեն. և դու քրիստոնեայ լեր, և զիս 'ի պարսիկս տար, և դոքա քեզ։

Տրտմեցաւ Սուրէն, և ոչ կարաց խօսել զերիս աւուրս։ Եւ ապա արձակեաց իշխանն առնս, և ասէ. Մի՛ տրտմիր, զի ըստ քո կամացդ առնեմ զամ ինչ. բայց արի անցանեմք յայնկոյս, և յուխտս երթամք 'ի վանս իմ, զոր շինեաց հայրն իմ։ Եւ առեալ զՍուրէն անցին յայնկոյս Բ.ռածանոյ, և զկինն և զորդին 'ի հետ տարան։ Բայց զի նենգել կամէր պարսկին, զկին և զորդին և զՍահան կամաբարկան յայնկոյս Թողեալ, զի որ 'ի նա անկցի՝ նա սպանցէ։ Եւ ինքն Թողեալ զզօրս իւր 'ի Մեղտի չորեք հազար այր, և զՊարսիցն յանդաստան վանացն՝ զոր Բ.ռտից գեւղն կոչէն, և առեալ չորեքհարեւր այր ընտիր զիւրեաւ, և չորեքհարեւր գնորայն, և գնացին երկոքեանն 'ի վանսն։ Եւ իբրև եկին առ Լ.ադուցեալ խաչն, իջին յերիվարացն, և գնային հետևակ 'ի վանսն. քանզի չէր հնար ումեք երիվարաւ ընդ այն տեղւոյն 'ի վեր անցանել։ Եւ ոյնպէս և յարևելից կուսէ ձորոյն 'ի ստորոտ զառ 'ի վերին մինչև յեկեղեցին չիշխէր ոք գալ. զի թէ Տրդատ և Գրիգոր ոչ իշխէին գալ անդ երիվարաւ, ապա ո՞վ այլ ոք։

Բ.ռդ իբրև մերձեցան 'ի վայրս վանացն, ընդ առաջ եկին պաշտօնեայքն, և արդելուին զնա վանն

1 Յերկուս օրինակս Բ.խտանայ գինին։

Սուրենայ։ Իսկ Սմբատ բարկացեալ ասէր. Որով հետև պարսիկք այնպիսի պիղծք էք, որ և մայրեացն արժանի չէք, դուք և կենաց արժանի ընդէր էք։ Եւ յարձակեալ'ի վերայ նոցա Պարազայ իշխանին Պալունեաց, եհար սրով և կտրեաց զդլուխն Սուրենայ։ Եւ զերկու իշխանսն Պարսից կախեալ զծառոյն խեղդեցին, և ինքեանք դարձան յերիվարսն. քանզի զօրք իշխանին Պալունեաց թագուցեալ էին'ի բլուրն'ի փոքր ամրոցին'ի Մեծամօրին, որք երեք հարեւր, 'ի նեղբոյ Ենդակայ. և հեծեալ նոցա յերիվարսն, մինչև իջուցին'ի Մեծամօր։ Եւ որք'ի դարանին էին, ընդդէմ եկին. և'ի մէջ առեալ զայն չորեք հարեւր արսն կոտորեցին, և ինքեանք իջեալ յայլ զօրսն գնացին։ Եւ որդ այնք, որք յամրոցին Եւրտից գեղջն էին, 'ի գիշերին'ի դուրս ելեալ՝ իջին'ի վերայ Պարսից. և կտրեալ զերիվարս նոցա աւելի քան զերկու հազար և հինգ հարեւր, և հանին'ի Սրոց[1] ձոր։ Իսկ զօրացն Պարսից զհետ մտեալ գողոցն, և հասեալ յայն տեղն՝ որ կոչի Գողոց աղբեւր, և դարձան'ի վերայ նոցա ձիատարքն[2], և հարին պարսաքաւրօք և աղեղամբք հինգհարեւր և քսան այր. և զերիվարսն առին և խառնեցին յայլսն, և եղին երեք հազար ձի։

Իսկ ումանք հետևակեալք ձորամուտք եղին'ի Պարսից զօրացն. և գնացին յանտառն, և անկան'ի վերայ ձիագողոցն, և սկսան կոտորել։ Իսկ որ աւագն էր'ի ձիագողն, որոյ Սրեմն[3] կոչէին, դարձաւ ընդդէմ. և սուր հանեալ՝ ինքն միայն պատերազմեցաւ, մինչև դարձան ընկերքն նորա։ Եւ իբրև նոքա դարձան՝ Սրեմ մեռաւ, զի հարին նետիւ'ի սիրտ նորա. և թաղեցաւ'ի նոյն ձորն, և կոչեցաւ անուն ձորոյն այնորիկ Սրեմաձոր[4]։ Եւ ընկերքն քարիւ և նետիւ ընդդէմ դարձան, և սպանին զբազումս. և այլքն փախստական եղեալ՝ եկին ժողովեցան'ի մի վայր, և իջեալ ճաշեին։

1 Ցերկուս օրինակս 'ի Սրենոյ։

2 Ցերկուս օրինակս յիագողս։

3 Ցերկուս օրինակս Սերեմ. որպէս և 'ի առորև։

4 Ցերկուս օրինակս Սերեմայոր։

Իսկ ոմանք յՍղկանայ Եղեալ գնացին որոյ պատ-
ճառանօք Երկերեւր և յիսուն այր։ Իբրև տեսին՝ զի
յանհոգս էին Էջեալ պարսիկքն, գողաբար յարձա-
կեցան 'ի վերայ, և ոչ ոք կարաց յերիվարն Եւանել.
այլ 'ի շուրջ Եկեալ, և 'ի սեղան անդր սպանին հինգ
հարեւր և ութ այր. և վասն որ անդ ժողովեալ սպա-
նին, կոչեցաւ անուն տեղւոյն Յողովս։

Յս մինչ այս այսպէս գործեցաւ, Սմբատ և իշ-
խանն Պալունեաց Թագեան 'ի ձոր ուրեք։ Յս ա-
ռաքեցին զոմն 'ի Սեղտի, թէ փութացէք գալ 'ի
վերա դոցա. և ինքեանք առաքեցին արս հարեւր,
գրգռել զզօրն Պարսից։ Զոր տեսեալ զօրացն,
գրոհ տուեալ զՀետ՝ մի մի հանանէին։ Իբրև Եկին
զօրքն առ Սմբատ, ասէն. Ցուք զձեզ 'ի բլուրն, զի
տեղին աջող է պատերազմի. և անձնասպահ լիք, մինչ
չեւ մեր զօրն հասանէ։ Յս նոցա 'ի բլուրն Եւեալ, և
զօրացն Պարսից բազմացեալ 'ի վերայ Սմբատայ և
Սարազայ, և նոցա կրկնեալ ծունր այ, յօգնութիւն
կոչելով զՔրիստոս Կարապետն. Ցիշեա, ասէն, զերախ-
տիս մեր. և որպէս 'ի հեռուստ օգնեցեր, 'ի մօտոյս
մի վերջանար 'ի մէնջ։ Յս Եհաս 'ի թիկունս օգնա-
կանութիւն այ։

Յս փողոց տուեալ 'ի վերայ բլերն, Սմբատայ յաջ
թեւն, և Սարազայ յահեակն, և սկսան արեամբ
թաթաւեալ ինքեանք և երիվարք իւրեանց։ Յս մա-
ծաւ սուրն 'ի ձեռին Սմբատայ, և ոչ կարաց հանել.
քանզի մածեաւ արիւնն ընդ սուրն և ընդ ձեռնա-
տեղին, և կոտորեցաւ։ Յս Իբրև տեսին պարսիկքն՝
Եթէ ոչ կարաց առնուլ այլ սուր, ձայն տուեալ՝ ա-
սէին ցմիմեանս. Փութասջիք, զի մածեալ է ձեռն
քաջին, և կապեաց զնա ածն իւր, և սուրն 'ի ձեռին
կոտորեալ է։ Յս պատեցին զնա բազումք. և Իբրև
զփայտ չոր, որ 'ի ձեղքիւն Ճարճատէ, այնպէս Ճար-
ճատէին 'ի վերայ գլխոյն Սմբատայ զէնք։ Իսկ նա
բարձր ձայնիւ ասէր. Ո՜այ քաջութեդ ձերոյ, զի ոչ
կարացիք հերձուլ զգլուխ իմ։ Զայս ասաց, զի յիշե-
լիք լեցի բանն։ Բայց Իբրև գիտաց՝ Եթէ կարի սատ-
կացան 'ի վերայ նորա, ձայն բարձեալ՝ ասէ. Ո՞ւր ես
բազուկ քաջ, և մուրճ հզօր ընդդէմ թշնամեաց,

գաւառան իմոյ ԾերուԹեանս, իշխան Պալունեաց. յառաջ մատիր որպէս քաջ արծուի, զի անդեղք և բուէՀք պատեցին զիս։ Եւ նորա Թողեալ զահեակ Թևն յորդին իւր Վահան, որ զՎահանովիսան շինեաց, և ինքն քաջաբար որպէս զարծուի՝ կանչեալ դիմեաց 'ի վերայ։ Որ և 'ի դողմանն հարեալ՝ մի երիվարացն, և հասեալ 'ի Թիկունս Սմբատայ, և բաւեալ զտէգն 'ի վերայ պարսկին Թիկանն, և անդէն էհան ընդ ոդն երիվարին. և այլ ոչ ժամանեաց հանել զտէգն։ Օ որ ծաղը արարեալ, ասէր. ԵրԹ չափեա զտէգդ՝ ԹԷ քանի կանգուն է. մի որ սուտ ասէ՝ ԹԷ երեք գիրկ է, և խաբէ զքեզ։ Եւ անդէն մեռաւ։

Իսկ Սմբատայ եղեալ յեզը պատերազմին, և ձախ ձեռամբ պրկեաց պարսիկ մի, և ետ զենուլ 'ի վերայ ձեռինն և սրոյն, զի իջցէ ջերմ արիւնն և Թուլացուսցէ զառնատեղն։ Եւ փոխեալ այլ սուր, և եղեալ յերիվարն. և իբրև հեծաւ, ետես զի հազար այր պատեցին զնա կրկին, և 'ի մէջ առեալ զՀինդհարեւրան։ Եւ իբրև գիտացին՝ ԹԷԹ կացեալ են երիվարքն, էհար պարսիկ մի և ընկէց, և զերիվարն առեալ մատոյց Սարազայ իշխանին, և ասէ. Եկ և հեծիր իշխան Պալունեաց։ Իսկ նորա փոխեալ զոմանն, նստաւ 'ի վերայ նորա. զոր տեսեալ զօրացն՝ զարմացան. և այսպէս արարեալ՝ 'ի մէջ ահաւոր պատերազմին փոխեցին զերիվարս իւրեանց։ Օ զի որչափ և զօրքն բազմնային, նոքա յանհոգս լինէին 'ի մէջ նոցա. զի այնչափ կուտեցան 'ի վերայ, որ և տեղն չպատանէին՝ որ յեզը ելանէին։

Եւ իբրև սկսան ումանք երկմտել 'ի զօրացն Սմբատայ, ըստ տեսչուԹենն այ տեսին զմեւս Սմբատ՝ զի գայր, որ էր իշխան Հաշտենից. և ածէր զՎահան կամնարական զորդին Սմբատայ, և վեցհազար այր ընդ նմա։ Օ որ տեսեալ Սարազ իշխանին, աղաղակեաց և ասէ. Վ.աջորդի Վահան, ուր էիր՝ որ ոչ վաղ եկիր յօգնուԹիւն։ Իսկ Վահան ձայն բարձեալ, ասէր հանդերձ արտասուօք. Կայ այն տառապեալ հայրն իմ Ծերունի, ԹԷԹ փոխեցաւ առ տէր 'ի հանգիստ։ Իսկ Սմբատայ լուեալ, ասէր. Սուրբ

Կարապետն ինձ 'ի Թիկունս հասեալ էր, և ես 'ի ձեռաց անօրինաց մեռանիմ։ Իսկ նորա գոհացեալ զայ, և 'ի դիմի հարեալ՝ կտրեցին փողոց, անցին 'ի ներքս. և պարզեցին զմի թևն նա, և զմիւսն Իշխանն Դաշտենից Սմբատ. և յինքեանս առեալ զպատերազմն, սկսան կոտորել զպատերազմագլուխսն։ Այս 'ի վերայ շրջեալ, զմեւս թևն Ս՝ահմանայ բոլորեալ, 'ի մէջ առեալ զքաջսն Պարսից, կոտորեցին մինչև յերեկոյն։

Այս իբրև 'ի մուտս եղև արևն, մնացին 'ի Պարսից չորեքարեւր այր, որք ընդ միջոցն ելեալ փախեան. և քանզի մնացեալք էին երիվարքն նոցա, երթեալ մտին 'ի ձոր մի, և թագեան ինքեցին խոյս առեալ[1] մինչև 'ի մեւս աւուր հասարակն։ Զոր եկեալ զօրացն գտին, և ջուր ցանեալ 'ի վերայ նոցա՝ զարթուցին, և առեալ տարան զնոսա 'ի Ա՝եղտի. և կոչեցաւ տեղին այն Թ՝մբրաձոր։ Իսկ Սմբատ հրամայեաց ըզդիակունսն կուտել 'ի վերայ իրերաց 'ի բլուրն. և վասն Ս՝արազայ կոտորածին՝ կոչեցաւ տեղին այն Ս՝արազաբլուր[2]։ Այս ինքեանք եկեալ իջաւանեցան 'ի վանսն գեւղն, զոր կոչեն Կենաց վայրք. և իբրև մտին 'ի գեւղն, ընդ առաջ եղեն նոցա պարաւորքն, և երգս ասեալ բազում ինչ իրաց՝ գովեին։ Որ և յետոյ 'ի հոտել դիականցն և յորդնել, շեր հանեալ՝ ասէին.

Կերսն գազանք զմարմինս դիականցն Ս՝արազայ, և գիրացան։ Կուզ կերեալ, ուռաւ որպէս զարջ. և աղուէս հպարտ եղև քան զառեւծ։ Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց. և արջ, քանզի զոր ուտէն՝ չմնայ առ ինքն, 'ի սովոյ մեռաւ։ Ագռաւք, քանզի ագահք էին, նոսան և այլ ոչ կարացին վերանալ. մկունք, քանզի շատ կրեցին 'ի ծակսն, ոտքն մաշեցան։

Զայս ամ՝ ասացին, և 'ի դէպ էր վասն իրացն. որ և կոչեցաւ անուն գեղջն Շ՝իրականիք։

Իսկ զարան՝ որ 'ի Ա՝եղտի տարան՝ բժշկեալ 'ի ցաւոց վիրացն, և ետ նոցա գանձս և երիվարս և զինս.

1 Յերկուս օրինակս խոյդեալ։
2 'Ի միում ևեթ օրինակի Ս՝արազաթիւրոր։

և յղեաց զնոսա 'ի պարսիկս։ Այլ ինքեանք եղեալք 'ի տերունական տունն, ընծայս բաղումս մատուցին այ 'ի ՝ոբ Պարապետն, և ցնծութիւն դարձան 'ի տունս իւրեանց։

Այլ 'ի սոյն աւուրս վախճանեցաւ Երանելին Ստեփաննոս, և կայ առ այլ հարսն 'ի Հայրաբլուրն։ Այլ առեալ Պ ահանայ զեպիսկոպոսունն մամիկոնենից և զՊալունեաց և զՀաշտենից, և եկն 'ի վանսն Գլակայ. և ձեռնադրեցին հայր վանացն զՀպիփան, որ 'ի Գունայ դաշտէն էր եկեալ յանապատ, և քնակեալ 'ի վայրսն Եկեղեցւոյն։ Այս եկաց քսանեքորդ երկրորդ[1] զկնի Ստեփաննոսի. և կացեալ 'ի վանական նուէն ամս քսան, և գնաց 'ի ժողովն՝ զոր արար Հերակլ յինն և 'ի տասն ամի թագաւորութեան իւրոյ[2], և նզովեցին զՍամ հերետիկոսունս. և եպիսկոպոսն Հաշտենից հալածական լիներ յերկիրն Յունաց[3]։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ ՊԱՏՃԵՆԻՆ

Վասն դալոյն Տիգրանայ, և կոտորածին՝ որ 'ի Հոնընկէցն։

ԳԱՐՁԵԱԼ այլ զոր առաքեաց Խոսրով 'ի վերայ ապստամբ տանն մամիկոնենից, զՏիգրան զօրապետն մեծ՝ քսան հազարաւ։ Իբրև եկին Պ ապահունիս, կռ չեաց զՊ մբատ առ ինքն. իսկ նա յղեաց զորդին իւր զՊ ահան կամնարական, տեսանել թէ զինչ խնդրէ։ Իբրև գնաց իմացաւ զիրսն, արձակեաց պատասխանի առ հայրն և ասէ. Այս քաղում անգամ բարիս խոստանայ, և բաղում անգամ չարիս. բայց ինդրէ զնշխարս Մ՝ուշեղայ իշխանին և զքո հօրն Պ ահանայ, և զկինն Պ ախթանգայ և զորդին՝ զոր ապանին 'ի պա

1 Յերիս օրինակս քսանէրորդ։
2 Յերկուս օրինակս յինն ամն իրեարց օրինակք և աղաւաղեալ։ Խոսրոյ։
3 Յայսմ վայրի անմիաբան են

տերաղմին Վարազայ[1]։ Այսպա թէ ոչ, գամ 'ի տեղին, ասէ, ուր հաւատք ձեր են. զայն բրեմ և աւերեմ, և կրակատուն առնեմ զեկեղեցիս ձեր, և ըզձեզ 'ի դուռն արքունի խաղացուցանեմ։ Այրդ զայս ասաց, և ինքն ընդ Հաշտեանս կամի գալ 'ի վերայ. այլ ես գնամ զՀետ նորա. և դու ժողովեա զզօրս մեր, և գնա 'ի սուրբ Կարապետն, աղաչեա զկրօնաւորսն՝ աղօթս առնել։ Ողջ լեր 'ի Տէր։

Իսկ Սմբատայ լուեալ զայս, առեալ զթուղթն՝ գնաց առաջի սրբոյ Կարապետին. տարածեաց ըզձեռսն առաջի սրբոյ սեղանոյն, սկսաւ լալ և ասել. Օ՜ արթիր Տէր, և զարթո զզօրութիս քո. տես Տէր, մի՛ լուեր Տէր, և մի՛ դադարեր. քանզի կարի խրոխտացաւ թշնամին 'ի վերայ մեր, այլ կամք քո եղիցին. բայց սակայն աղաչեմք, յիշեա զՀանն մեր՝ որ 'ի վերայ քո վասն ուխտին սրբութեան մերոյ, որով փառաւորեսցի անուն քո Տեր։ Եւ զայս ասացեալ, ետ բերել երկոտասան թուր, և դնել առաջի բեմին մինչև պատարագ մատուցանէին. և ապա առեալ ասէ. Տեր, հաւատամք 'ի քեզ, թէ և այս սուրքս եղիցին խմոր այլ սուսերաց, և հրամանաւ քով յաղթեսցուք նոցա։ Ա՛վ Տեր, նեղեցաք ճանճրացաք 'ի կոտորելոյ անգամ զանօրէնսն. նեղեցան և որք զսուսերս մեր 'ի ժանկոյ և յարեանցն սրբեցին. այլ յուսամք՝ թէ որպէս արարերդ, և առնես։

Եւ ելեալ գնաց ժողովել զզօրսն, ինչհազար ինչ հարեւր և քառասուն այր. և երթեալ էջ 'ի Հաշտեանս, 'ի գեւղն՝ որ Գ՝իրեհն[2] կոչեն, 'ի ջրառատ վայրսն։ Եւ Տիգրան եկեալ 'ի Հոնընկեցն ինքանէր. և առաքեաց առ Սմբատ, և ասէ. Բարի եկ առ իս, և մի՛ երկնչիր, և առ յինէն գանձս և մեծութիս, և եդիցս պսակ 'ի գլուխ քո, և արարիցս զքեզ մարզպան Հայոց, միայն լոկ զոսկերսն Մ՝ուշեղայ և զՍահանայ տուր ցիս։ Իսկ նորա կալեալ զպատգամաւորսն, հրաւոյց շամփուր մի երկաթի, և եդ պսակ շուրջ զՀանկատուին, և ասէ. Այց տեսանեմ՝ թէ վասն քո զինչ պարգևս գայցէ ինձ, որ ես քեզ պսակ եդի։ Եւ

1 Ցերիս օրինակս Վարազայ։ 2 Ցերիս օրինակս Կրեհն։

հրամայեաց ունել զՇամ արան՝ որ ընդ նմայն էին եկեալ, և կորեաց զգլուխս նոցա մինչև ցվեց ժամ աւուրն. և կոչեցաւ տեղին այն Մոգուց գերեզման, որ է Մոկկունս[1]։

Իսկ Սմբատայ եղեալ 'ի վերայ լերինն, որ Արեմավայրս[2] ասեն. բանակեցաւ հանդէպ Տիգրանայ։ Եւ իբրև երեկոյ եղև, Ա ահան կամնարական որդին Սմբատայ յարուցեալ կորեաց զգլուխ որդւոյն Տիգրանայ և զերից իշխանացն, զի էին 'ի միում խորանի. և առեալ զգլուխս նոցա, եկն առ հայրն իւր, և դարձեալ եկն 'ի նոյն տեղին. և գնացեալ գաղտուղթիւ[3] եմուտ ընդ ստորոտ խորանին առ Տիգրան։ Իսկ նորա տեսեալ զսուսերն մերկ 'ի ձեռին նորա, ոչ իշխեաց ումեք ձայն տալ. կարծեաց թէ զկարասին կամի գողանալ։ Իսկ Ա ահանայ յանկարծակի առեալ բարձ մի, աճապարեաց և նստեաց 'ի վերայ բերանոյ նորա, և հարաւ 'ի վերայ նորա. և մտեալ մեւս այլ ծառային Ա ահանայ կորեաց զգլուխս նորա, և ժողովեալ զկարասին և զպատուական ակունսն և զընտիր սուսերսն, եկ գնաց։ Եւ խնդացեալ զօրացն Հայոց, մեծ գոհութիւն այ մատուցանէին. և ապաշաւեցին, զի զգերեզմանս իշխանացն աւերեցին։

Իսկ Ա ահանայ լցեալ իմաստութիւն, առեալ երկերեւր կաշեայ ասպար, և արկ զՀարեւր ջորւոջ ամենեաց, երկաթ մի յայս կոյս ասպարին, և երկաթ մի յայն. և գնաց մերձ 'ի բանակն Հունին՝ որ փոխանակ էր Տիգրանայ, և ունէր ընդ ձեռամբ իւրով ութ հազար այր, և բանակեալ էր մերձ 'ի քարագլուխն՝ որ հայի հանդէպ Տարօնոյ լերինն[4]. և էր սա զատակաց յայլոց բանակացն. արդ առեալ Ա ահանայ զՀարեւր ամենի ջորւոյն, և տարաւ զնոսա յեզր բանակին. և 'ի տան ջորւոյն այր մի՝ որ զՀետ երթայր։ Եւ իբրև խթեցին զջորւոյն սրով և արկին 'ի բանակն, և ինքեանք զՀետ մտեալ՝ զփող պատերազմին հնչեցուցին, և առ ձեռն սկսան կոտորել. և

1 Յերիս օրինակս Մոգոնս։
2 Յերիս օրինակս Սէրէմավայրք։
3 Յօրինակի միում գաղտուստք. յայլում գաղտուռք. և 'ի միւս այլ գաղտոսք։
4 Յերիս օրինակս որ հանդէպ հայեր լերինն Տարօնոյ։

կանչեալ զարհուրեցան ժպրհեցան, և աղմկեցան յոյժ։ Բանզի և ջորիքն ընդ ձայն ասպարացն, և ընդ զօրացն աղմկել, և ընդ փողոցն բախելն խրտուցեալ, յամ կողմանց լոկ արշաւէին 'ի բանակն։ Եւ զօրքն կարծէին եթէ հեծեալ է, և ձայն սուսերացն 'ի կոտորելոցն է, իւրաքանչիւր ոք լոկ վայ ձչէին, ոչ գիտելով զհետս անձանց. քանզի ՝ներ պատերազմէր ընդ նոսա։

Բ.րդ քանզի այլ զօրքն ոչ կարէին անցանել, զի էր մութն, և մեր զօրքն լոկ սատակելով նեղէին, և զքարագլուխն բնաւ չկարացին յիշել, զի յիմարեցոյց զնոսա ՝ներ, ապա թողեալ զկարասին՝ դէմ փախստի 'ի քարագլուխն արարին. և սկսան 'ի վայր հոսել ահաւոր վիմանցն ընդ բարձրուն։ Եւ ոչ ոք կարաց գիտել զիրան, մինչև պակասեցաւ ձիչ աղաղակին, և ապա գիտացին զօրքն Հայոց՝ թէ ընկղմեցան պարսիկքն. դարձան ինքեանք 'ի բանակեաղ, և զկարասին և զգանձն ժողովեցին և զերիվարսն և զուղտսն, և արձակեցին 'ի գաւառն Պալունեաց։ Եւ ընդ ձի և ընդ ջորի և ընդ ուղտ և ընդ էշ՝ գտաւ ութ և տասն հազար, որ ծածկէր զերեսս գաւառին։ Բ.րդ իբրև առաւօտ եղև, սկսան խնդիր առնել Ցիգրանայ և որդւոյ նորա. և ոչ գտին։ Բ.պա զհետ փախստէիցն մտեալ խնդրէին, և հայեցեալ տեսին զնոսա դահավիժեալս։ Բ.պա միաբանեալ արարին իւրեանց իշխան զՄ՝ԻՀրխոսրով. և բարկութիւն լցեալ, ռազմ կարգեցին։

Իսկ Ամբատ զՍ՝ահան կողմնապահ էր թողեալ 'ի գիշերին ջրեքհազարաւ. և երկու հազար 'ի դարանի կացուցեալ ընդ երկուս դէս։ Եւ ինքն զայլ զօրսն ռազմ կարգեաց, և ետ զաջ թևն Ս՝ արազայ իշխանին Պալունեաց. զի այնչափ հզօր էր, որ մարդոյն քան զմինն այլ ոչ կրկնէր։ Եւ զահեակ թևն տայր իշխանին Հաշտենից, և ինքն թողու իւր թիկնապահ զՍ՝ արազայ [1] որդին զՍ՝ահան։

Եւ գումարեցան ընդդէմ միմեանց, և եկին առ միմեանս Ս՝ԻՀրխոսրով և Ամբատ, և սկսան հարկանել

[1] Ցերիս օրինակս զՍ՝արազայոյ որդին։

զգլուխս իրերաց։ Եւ դիմեաց զօրն Պարսից 'ի վերայ Սմբատայ իբրև զմեղու, և սկսաւ պակասել Սմբատ, քանզի այր ծերացեալ էր. ձայն բարձեալ, ասէր. Ո՞ւր ես Վահան որդեակ, հասիր։ Եւ նորա ձայն արկեալ 'ի նոր Կարապետն, ասէր. Ահա ժամ, ով Մկրտիչ Յոհի Կարապետ Յովհաննէս. ո՞ւր են իմ սուրբ կրօնաւորացն աղօթքն։ Եւ մտեալ յառաջն, ցրուեաց զժողովեալսն 'ի վերայ հօրն իւրոյ. և Սմբատայ ոգի առեալ, ածեալ զսուրն և եհար զուսն, և թիկնախառն 'ի վայր ընկեց զգլուխս աւագի նոցա. և սուր 'ի վերայ եդեալ փախստական արարին, մինչև 'ի դարանն։ Իսկ դարանակալքն յարուցեալ, 'ի մէջ առին զնոսա. և բազմաց կորուստ եղև այն օրն, և չորեք հազար գլուխս համարով ընկեցին ընդ քարն, որ կոչեցաւ Հոնընկեց։ Եւ ժամանեաց նոցա երեկոյ, և զօրքն Պարսից փախստական եղեալ՝ իջին 'ի Հաշտեանս ութ հազար այր. և անդ հանդէս արարեալ զօրացն, և կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Հանդիսեանք. և խաբանօք կամէին գնալ ՅԷպահունիս։

Իսկ Սմբատայ իմացեալ եթէ գնացին, յարուցեալ մտին զհետ նոցա, և 'ի վաղիւն հասին։ Եւ իբրև բանակեցան առ իրերօք, խորհեցան սոքա գնալ 'ի վերայ Պարսիցն, և կազմեցան առ երիկունն։ Եւ դեռ սոքա յայս էին, եկին հասին զօրք ՅԷպահունեաց իբր երեք հազար. և տեսին զօրքն Հայոց՝ զի խառնեցան 'ի պարսիկս զօրքն Էպահունեաց, լքան և յերկիր կործանեցան. և հնարս իմացեալ, ընդ Մարկուց [1] փոքն 'ի վայր գնացին յեզր Էրածանոյ, և անդ բանակեցան։ Իսկ պարսիկքն յարուցեալ ըզհետ մտին նոցա, և տուեալ գետոյն՝ նեղէին զնոսա։ Իսկ Սմբատայ զամ զյոյսն իւր յած արարեալ, ասէ. Ո՛վ որ, գիտեմ զմարդասիրութիւն քո առ մեզ զվաղընջուց. և այժմ տես զմեզ, զի աստի թշնամիքն, և անտի գետն. և արդ հայեաց 'ի մեզ, եթէ զիարդ թշնամիք նեղեն զմեզ։ Եւ կնքեալ զանձինս իւրեանց, դիմեցին 'ի վերայ Պարսիցն։ Եւ երևե-

[1] Յերկուս օրինակս ընդ Մարդոյ։

ցաւ նոցա 'ի պատերազմին այր մի ահեղ և լուսաւոր՝ և հեր նորա լոյս փայլատակէր։ Օ՝որ տեսեալ Ա՝ա հանայ քաջի, և գիտացեալ՝ թէ Ա՝արապետն է, խընդ դացեալ յարձակեցաւ 'ի վերայ նոցա. և կտրեալ զզօրսն երեքհազար, և եդեալ առաջի և տարաւ անցոյց ընդ Ա՝ստղենս, և պատեալ ի՝ջոյց զնոսա մինչև հանդէպ եկեղեցւոյն, որք կամէին ելանել 'ի նոյն տեղին, և զկրօնաւորսն սպանանել։ Իսկ զօրութիւն ՝ոն արդել զնոսա, և ոչ կարէին անցանել ընդ ձորն, յետս զդէմսն դիպելով. զոր սովորեցան Յետսանկ՝ կոչել տեղոյն։

Իսկ զօրքն եկեալ հասին յանտառն, որ հանդէպ վանացն հայի. և անդ թագեան։ Իսկ Ա՝ահանայ աՀՀապարեալ դնաց անդ, և սուր 'ի վերայ՝ եդեալ՝ կոտորէր զնոսա. և ոչ մնաց յիշատակ անգամ, և կո՝ չեցաւ տեղին այն՝ Ա՝ահու առիթ։ Այ՝ խիստ վաստակեցաւ Ա՝մբատ յաւուրն յայնմիկ. բայց 'ի թիկունս եՀաս նմա Ա՝ արաղ իշխանն Պալունեաց, և առաջի եդեալ զզօրսն գետավեժ առնէին, մինչև եկին 'ի տեղին՝ զոր այժմ Կուրայ [2] կոչեն։ Այ՝ որք 'ի փախուստն երթային, կացին երիվարքն նոցա. և Պա՝ ալունեաց իշխանն բաղում զօրօք զՀետ մտեալ, կոտորեին։ Այ՝ իբրև անդ եկին, ասէ Ա՝ արաղ ցպարսիկսն. Օ՝ի սպառեցաք, փախիք՝ որ մեք կոտորեմք։ Այ՝ նոքա ասեն. Կորեաք մեք և մեռաք։ Այ՝ կոչեցաւ անուն տեղւոյն Կուրայ. և 'ի նոյն տեղւոջն սկը՝ սաւ մի մի ունել զնոսա, և զթլփատն կտրեաց. և էին համարով հազար վեցհարեւր և ութսուն։ Իսկ այլք մնեալք 'ի գետն խեղդեցան արք երկու հազար։

Իսկ զոր Ա՝մբատ կոտորեաց, գունդն այն անցեալ յայնկոյս ընդ Հովեանս 'ի վերայ փախստականացն ընդ լեառն, իսկ արք ամրոցին ելեալ զկնի՝ նեռիւք և պարսաքարամբք և գլաք կոտորեցին արս երկու հազար և ութհարեւր։ Այ՝ որք ապրեցան՝ էին արք հազար և քառասուն. որք փախուցեալք գնացին 'ի պար

1 'Ի միւսմ օրինակի Յեփանգ. Ա՝յթան։
յայլում Ա՝յթան. և 'ի միւսում 2 Յերկուս օրինակս Կոսրան։

սիկս առ Խոսրով։ Եւ նա այլ զօրս առաքեաց 'ի Տարօն։

'Ի սոյն ամի վախճանեցաւ Սմբատ, և ետ տանել զինքն 'ի տապանատուն հարցն իւրոց 'ի վանսն Գլակայ. և կայ 'ի դուռն սրբոյն Յստեփաննոսի, զոր շինեաց Յստեփաննոսն այն՝ որոյ մայրն հերձաւ, և եդ 'ի նշխարաց սրբոյն Յստեփաննոսի անյայտս զձախ բոյթ ոտին սրբոյ նախաւկային։ Եւ 'ի նոյն ամի փոխմանն Սմբատայ՝ փոխեցաւ հայրն Նպիփան առ ՅԾ յետ քսան ամի. և նստաւ յաթոռ նորա Դաւիթ ամն երիս, որ է քսանևերրորդ 'ի սրբոյն Գրիգորէ։ 'Ի սոյն աւուրս կնքեցաւ Վահանայ որդին Տիրան 'ի վանս Գլակայ 'ի՝ ոբ Կարապետն, 'ի հայրապետութենն Դաւթի։

ՊԱՏՃԵՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վասն գալոյն Վարդուհրայ, և մեռանելոյն 'ի Փանդիկաւ։ յիսուն հազար արամբք յեզը Արածանոյ։

Եւ ԵՂԵՒ յետ ուղեւորութեան ամին, դարձեալ գժտութիւն[2] եղև ընդ պարսիկս և ընդ Վահան. և առաքեաց Խոսրով զօրս 'ի վերայ Տարօնոյ, հինգ բեւր և վեցհարիւր։ Որք բազում սրտմտութեամբ եկեալ հասանէին 'ի Տարօն, և կամէին անցանել 'ի վանսն Գլակայ, զի հանցեն զոսկերս Թշնամեացն. և եկեալ բանակեցաւ 'ի Մուշ։ Իսկ Վահան կոչեաց զորդին իւր զՏիրան քաջ, և ասէ. Որդեակ, մի՛ վասն զի 'ի մեծութեան ես՝ պատրիս 'ի մեղաց, և մի՛ վասն զի մանկիկ ես՝ խաբիր 'ի գեղ կանանց. այլ յի՛ շեա զքո հարսն, ո՛րքան սրբութի՛ւն և ամբծութի՛ւն ծառայեցին ՅՍ։ Մի՛ մոռանար զծառայութի՛ն սրբոյ կա-

1 Ցերկուս օրինակս փոդիկաւ. 2 Ցերկուս օրինակս դժբութի։ և 'ի միւս այլ փանդիկ։

բապետին, զի 'ի պատերազմունս նա էր՝ որ օգնէր մեզ. այլ եթէ շատակեաց կամիս լինել, 'ի պղծուէ մի պատրիր, որպէս և չես իսկ։ Եւ եթէ ես մեռանիմ 'ի պատերազմին, զիս 'ի մեր վանսն տուր տանել։ Եւ դու ծառայեա՛ այ և կրօնաւորաց նորա սրբութի՛ւն, որպէս և ես ծառայեցի. զի ոչ պատրեցայ 'ի գեղոյ, և ոչ զրկեցի, և ոչ նեղեցի զտառապեալս. քանզի զամենեսեան՝ որք ընդ իմով իշխանութի՛ւն էին, զարս և զկանայս և զմանկտիս, զհաւատացեալս 'ի Տի՛ն, իբրև զեղբարս և զընտանիս տան իմոյ հոգայի խնամով որպէս հարքն իմ։ Որդեակ, զնոյն և դու արասցես, և ո՛ր զօրացուսցէ զքեզ։ Ա՛ռդ գնամք 'ի պատերազմ։

Եւ գնացին 'ի պատերազմ. և արձակեցին առ հայրն Գրիգոր, որ քանզի հինգերորդն էր, և նստաւ յաթոռս հայրապետութեան ամս ութ. և տարան 'ի պատերազմ երեք հարեւր ութսուն և հինգ կրօնաւորք ինկղով։ Իբրև խմբեցաւ պատերազմն յեզերս Ա՛ռաջանոյ, առ անտառովն՝ որ կոչի Կաղամախեաց[1] բլուր, կրօնաւորքն սեւազգեստք էին մանգեղինօք և ինկղաւորք, և ընդ տան առնն ժամահար մի, և ընդ երկուսն խաչադրոշ բարձրաբուն[2], և Ճակատեցան նոքա ընդդէմ իրերաց 'ի պատերազմ՝ յայնկոյս գետոյն որ 'ի դաշտին. զոր տեսեալ Թշնամիքն զարմանային։ Եւ Ա՛ստուծոյ ոչ եմուտ 'ի պատերազմ. այլ տեսից, ասէ՝, թէ նոքա զինչ գործեն։ Եւ իբրև խմբեցաւ պատերազմ ընդ իրարս, և կամէին փախչել վահանեանքն, յայնժամ նոցա ծունր կրկնեալ՝ միաբան աղաղակեցին առ ա՛ծ աղօթիւք և լի արտասուօք. Ո՛վ ա՛ր, հար զմեր պատերազմն. ո՛վ Կարապետ, զարթիր 'ի ձայն պաշտօնեիցս։ Եւ զայս ասացեալ միաբան՝ յոսն կացին, և զնշան խաչին դարձուցանէին 'ի վերայ Թշնամեացն. և հարին զժամահարսն յանդուգն։

Եւ հայեցեալ Ա՛ստուած 'ի գունդ կրօնաւորացն,

1 Յերկուս օրինակս Կաղամախեաց. իսկ յերիսն Կաղամանէաց։

2 Յերիս օրինակս Ե՛ի փոսն էրջ. նաւորն ծամակաբ մի, նոյնպէս և յոսն խաչ մի նշանակաբ։

Եռեռ յաջ Թեւս նոցա Երիտասարդ մի՝ ահագին տես-
լեամբ, և Թագ ծիրանի 'ի գլուխ նորա և խաչ. և
'ի հանդերձից նորա հուր փայլատակեալ։ Այլ այլ Եր-
կուս Երիտասարդական հասակաւ տեսանէր, որք ա-
ռաջի կային Թեւաւորքն։ Օ որ և Թշնամեացն տե-
սեալ՝ յիմարեցան, և 'ի գետ անդր լցան. և որք 'ի
գետոյն յայն կոյս անցին, Մեղտայ ուշ արարին։ Իսկ
Վահան ձայն տուեալ յորդին իւր Տիրան և յայլ
զօրսն, և ասէ. Ահա նոքն արարածոց Աստուծոյ Երևի 'ի
մէջ ծառայից իւրոց. զի նա է Թագաւոր նոցա և մեր
ամենեցուն, որ խոնարհեցաւ 'ի ձայն պաշտօնէից իւ-
րոց, և էջ 'ի փրկել զնոսա և զմեզ. արդ սնդեսցուք
զկնի Թշնամեացն։ Իսկ անօրինացն հասեալ 'ի Մեղ-
տի, և գտին Երկոտասան ծեր 'ի կրօնաւորացն, և
սպանին զնոսա. որք Թաղեալք կան 'ի դուռն եկե-
ղեցւոյն, զի այն իսկ էր խնդրուածք նոցա։

Իսկ Վահան մնեալ 'ի գետն, կապեաց զերի-
վարն 'ի վերայ ողին հանդերձ զինաւն, և անց յայն
կոյս 'ի գեւղն՝ զոր Պարսից դէմն [1] կոչեն։ Այս անդ
ժողովեցան ամ զօրքն Վահանայ. և կրօնաւորքն 'ի
նոյն տեղւոջն աղօթէին մինչև էհաս առ նոսա հայրն,
որ ունէր զգլուխն Արդուհրայ աւագի նոցա։ Իսկ
Վահանայ վարեալ զզօրսն, և հասեալ 'ի դաշտն՝ որ
'ի վերայ Մատրավանիցն, և բոլորեալ ռազմ կանգ-
նեցին։ Այս եկեալ առ միմեանս Վարդուհրի, և Տի-
բան՝ որդին Վահանայ, ասէ Վարդուհրի. Կախար-
դասարքը, դուք 'ի կախարդն էք պանծացեալ, և կա-
խարդութիւն կամիք յաղթել Պարսից քաջաց։ Ասէ
Տիրան. Այթէ կախարդք եմք, դու վայր մի անսա՝
զի ես զքո ձիոյ ագիդ քեզ տեսանել տամ։ Այս աՀա-
պարեալ 'ի բաց ձգեաց զաջոյ ոտնն սոնապանօքն հան-
դերձ. և նորա հակեալ յայնկոյս անկաւ։ Ասէ Տի-
բան. Վարդուհրի, մի մեղադրեր. գլուխդ հակեաց
և ընկէց զքեզ. արդ ուղղեմ զքեռնդ։ Այս ապա
բառնայ. և կտրեալ զգլուխն ետ ցծառայ մի, և ա-
սէ. Պահեա զդա, որ ինքանեմք 'ի Մատրավանս և

1 Յերիս օրինակս Պարսից կոչմ։

գնդի խաղամք առաջի Ֆոր Կարապետին. զի դա էր, որ նախատեր զպաշտօնեայս նորա։

Եւ 'ի մէջ առեալ զզօրսն Պարսից, և սկսան փան դանել[1]. զի իշխանն Պալունեաց կտրեաց երկու իշխանս, և Եհան գնոսա մինչև 'ի Հաշտեանս։ Եւ իբրև Եհաս 'ի տեղի մի դաշտաձև, պակեաւ իշխանն փախստական մինչ դեռ զօրքն հեռի էին, և ոչ կարացաց խուսել կամ կռուել, այլ այնպէս կայր։ Ասէ մի ոմն 'ի Ծառայիցն. Օ՛ի պակեար, ո՛վ իշխան։ Եւ նա ասէ. Պաղակ իշխան տեսանեմ, և ոչ կարեմ գնալ։ Բայց ոչ կարացին գիտել, թէ զինչ էր բանն, և անդէն մեռաւ։ Իսկ նորա կտրեալ զգլուխն, և առեալ զերկու իշխանորդիսն՝ զորս եկալ, և ետ պահել. և ինքն գնաց զհետ փախստէիցն։ Եւ հասեալ միւս իշխանին, ասէ Վ արազ. Ինկիր պարսիկ կամաւ, ապա թէ ոչ՝ անկանիս ակամայ։ Եւ նա փախեաւ. և Վ արազ զհետ մտեալ, Եհար զտեղն 'ի Թիկունս նորա, և անցոյց ընդ ողն երիվարին, և ասէ. Այժմ անկանիս։ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ 'Ալերքինանկնիս։

Եւ սակաւ մի գնացեալ՝ Եհաս միւս այլ իշխանին, և ասէ. Ինկանիս կամաւ, իսկ եթէ ոչ՝ անկանիս ակամայ։ Իսկ նա ընդդէմ դարձաւ, և կտրեաց զգլուխ երիվարին Վ արազայ, և ընկէց։ Իսկ նա 'ի վայր վազեալ, և Եհար զձիւն երիվարին պարսկին, և ասէր. Ինկիր և դու։ Եւ անուանեցաւ տեղին այն Վ այրանկանիս։ Իսկ այնք՝ որք 'ի Պուղին էին մնացեալք, առեալ զերկու իշխանորդիսն, և զգլուխս այնր իշխանին՝ որ պակեաւն, բերին առ Վ արազ. և կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Պուղկ[2]։ Եւ դարձաւ Վ արազ առ Ամբատ որդին իւր, և ինքն առ Վ ահան. և նա կոտորեալ էր զբազումս, և վատաւ կեալ էր յոյժ։ Եւ փախուցեալք ընդ երեսս դաշտին փախստեայք լինէին, և անուանեցաւ տեղին այն Փանդիկ[3]։

1 Յայլում օրինակի խանդան դէլ. իսկ յԵրիս օրինակս Ն պոքէ. 'ի Ամենայն Պարսից Ն սկսան շրուել 'ի Ամենայն։

2 Յերկուս օրինակս Պուղ. և 'ի միւս այլ Պուղայ։

3 Յերիս օրինակս Փոյոդիկ։

Իսկ կրօնաւորացն դարձեալ գային 'ի Կաղամախեաց բլրէն, եկին ելին 'ի բլուր մի, որ հայի ընդդաշտն Մատրավանից. անկան առ նոսա գունդ մի պարսիկ փախստական, և աղաչէին զկրօնաւորսն՝ ապրել։ Իսկ իբրև եկին այլ գունդք իշխանին Հաշտենից, ասեն. Մի՞ր են պարսիկքն, որք գային զհետ փախստէիցն. և ոչ ետուն կրօնաւորքն զպարսիկսն 'ի ձեռս նոցա։ Այլ եկեալ իշխանին Հաշտենից, ասէ. Ո՞ի եղեն պարսիկքն։ Այլ նոքա ասեն. Բասիկ են ընդ Հայերոյդ։ Այլ կոչեցաւ անուն տեղոյն Հայկերտ[1]։ Այլ ապա դադարեաց պատերազմն. և զփախուցեալսն դարձուցին 'ի Մեղտի, և գտան համարով արս չորեքհարիւր և ութսուն. և տուեալ նոցա դանձս և երիվարս՝ արձակեցին 'ի պարսիկս, լինել զրուցատարս սքանչելեացն՝ որ հանդիպեցաւ 'ի կրօնաւորացն նոցա։

Ա Ճար եղև պատերազմին Տարօնոյ 'ի հինգ առաքինի իշխանացն, Մուշեղայ, Ա ահանայ, Սմբատայ, Ա ահանայ կամսարականի, և Տիրանայ։ Որոց յիշատակն օրհնութիւն եղիցի։

1 Յերիս օրինակս Հայրիերդ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վասն գիտելոյ զպատճառս Ծիծառնեայ խաչին, թէ յումմէ բերաւ, և կամ թէ ուրպէս կայ 'ի Ծիծառնէ, և կամ յոր ժամանակի գոր-ծեցաւ։

ԸՆԴ ԺԱՄԱՆԱԿՍ Թագաւորութեն Հերակլեայ զօրացաւ Խոսրով Պարսից արքայն. և գնաց մինչև Յերուսաղէմ. զքաղաքն աւերեաց, և զկտակարանն այրեաց, և զսուրբ խաչն գերեաց, և առեալ գնաց 'ի պարսիկս, եդեալ 'ի պահեստի զսո՛ւրբ խաչն հանդերձ սպասուքն մինչև յեւթն և 'ի տասն ամի Թագաւորու-թեանն իւրում։ Այլ զօրացաւ Հերակլ 'ի Թագա-ւորութեանն իւրում, գնաց 'ի պարսիկս, և էսպան զԽոսրով, և դարձոյց զսո՛ւրբ խաչն հանդերձ գերեօքն։ Այլ ընդ բազում օթևանօք զանց առնէր, տուեալ մնասնս բազումս Հայոց աշխարհին և մեծամեծ իշ-խանացն։ Իբրև գնաց Յերեզնաւան, կտրեաց սպա-սաւորն մեծ մասն մի 'ի գիշերին, և կամէր փախել։ Իսկ մի ոմն իմացեալ, ազգ արար Թագաւորին. և նորա առեալ զմասնն 'ի նմանէ, և կտրեաց զգլուխ նորա. և եղեալ զօրօքն գնաց 'ի Կեսարիա, և էտ զմասնն Հայրապետին Կեսարու, որ կոչիւր Յովհան. և ինքն գնաց 'ի Թագաւորաքնակ քաղաքն Կոստան-դինուպօլիս։ Այլ 'ի նոյն ամի գնաց Վահան կամնա-ական 'ի Կեսարիա, և էտ երեսուն և վեցհազար դահեկան հայրապետին Յովհաննու, և առեալ ըզ-խաչն եբեր 'ի վանս Գլակայ 'ի տեր Կարապետն, և եդ 'ի դարանն՝ որ 'ի վերայ սրբոյ սեղանոյն. և եկաց անդ ամս վեց։

Իսկ իշխանն Աբջուց կողմանն Գորգ Շատախաս, որ կոչեաց զանուն գաւառին իւրում Շատախ վասն աւելի անուան իւրում, սա եկն 'ի դաշտն Ցարօնոյ առ այր մի՝ որոյ անուն էր Ծիծառնիկ. որ շինեաց փոքր աւան, և եդ անուն նմա Ծիծառն։ Գլաչեաց իշխանն զԾիծառնիկ՝ եթէ հնարեա և գողացիր զխաչն, զի եկեղեցվանն քո ազգական է։ Իսկ ըզ-

խաչն և տուր ինձ, և առ յինէն վեցհազար դրամ։ Իսկ նա ասէ. Դրամն քեզ, զխաչն առնում, և գամ յերկիրն քո. և ընտրեմ ամուր տեղի, և շինեմ աւան. և զիմ անունս դնեմ։ Եւ յանձն կալեալ իշխանին, գնաց 'ի տուն իւր. իսկ Ծիծառնիկն զկինն և զորդիսն և զազգատոհմն իւր յղեաց առ իշխանն Ամրջուց, և ինքն եկեալ ծանոյց զիրսն եկեղեցպանին։ Եւ նորա յանձին կալեալ՝ իջոյց 'ի պահարանէն, և գնացեալ զհետ նորա յերկիրն իշխանին՝ ընտրեաց տեղի, և շինեաց եկեղեցի. և անդ եդին ըստերունական 'ոբ նշանն, և անուանեաց զաւանն Ծիծառն։

Եւ ընդ այն ժամանակսն 'Ներսէս Հայոց կաթուղիկոս, որ 'ի Տայոց էր ծննդեամբ, այն՝ որ զԱղարշկերտոյ 'ոբ Ամրջինն շինեաց, եկն վասն սուրբ խաչին տեսութեան։ Իսկ Ավահանայ առեալ զկաթուղիկոսն, եկն 'ի վանսն Գլակայ. և խնդրեաց զսուրբ խաչն։ Իսկ սպասաւորացն խնդիր արարեալ, ոչ դրտին։ Այլ առին իշխանքն և կաթուղիկոսն և եպիսկոպոսունքն, և եւթն օր Ավահան ոչ եկեր և ոչ էարբ։ Եւ յայսմանեալ նմա մինչ դեռ ինջեր 'ի դրունս եկեղեցւոյն յաւուր ուրբաթու, եառեալ ինքն իշխանն Ավահան, զի այր ոմն լուսաւոր ընդ սեամն եկեղեցւոյն յայս կոյս եղեալ, ասէ ցնա. Ո՞ւ կողոպտեցին, և զԱրջք շինեցին. արդ թոյլ տուր, զի երկիրն այն ամուր է, ոչ կարեն անտի գողանալ։ Իսկ նորա լի եղեալ խնդութեամբ, զարթեաւ. և ընթացեալ՝ աւետիս տայր կաթողիկոսին, եթէ խաչն 'ի Ամրջքն է։ Եւ խնդացեալ յոյժ՝ 'ի վաղիւն տօն ցնծութեան կատարեցին, և յարուցեալ գնացին 'ի տեղին. և կալեալ զկրօնաւորն՝ որ զխաչն էր գողացեալ՝ եառ ցկաթուղիկոսն, և հանել եառ զերկոսին աչս նորա՝ որ զի կողոպտեաց զոբ Կարապետն։ Եւ կալեալ Ավահանայ զԾիծառնիկ, էհատ զգլուխս նորա։ Եւ զիշխանն Ամրջուց եդեալ յՍղկան մինչև էառ 'ի նմանէ հարեւր հազար դահեկան, և ապա շինեաց զեկեղեցին՝ որ 'ի վերայ բլերն Ամշու՝ յանուն որդւոյ իւրոյ կրտսերի Ստեփաննոս, որ կայ 'ի նոյն դուռն թաղեալ։ Իսկ զխաչն եառ Ավահան 'ի ձեռն եպիսկոպո-

սին Աբջուց. և նա իսկ կացոյց քահանայս Եւթն 'ի վերայ եկեղեցւոյն, զի յամ ամի մինն ունիցի. և վեց հազար դրամ կարգեցին նոցա տալ Հայոց 'ի Տարօնոյ։

Աբդ զայս պատմութիւս գրեալ եդին յեկեղեցին Ծիծառնեայ. և եղև այս 'ի Թուականութեն Հայոց հարեւր և երեսուն, և Հռոմին չորեքհարեւր քսան և Եւթն. զոր ստուգիւ գրեալ զեղեալ պատմութիւն, եդին 'ի Գլակայ վանսն 'ի ներ Կարապետն, հրամանաւ Գերսիսի Հայոց կաթուղիկոսի՝ որ քսանեւհինգերորդ էր 'ի սրբոյն Գրիգորէ, և յիշխանութեն Վաղ հանայ մամիկոնեանոյ։ Գրեսուն և երկու իշխան նըստեալ է 'ի Մուշեղայ մամիկոնեան ցեղին. սա եկայ իշխան 'ի Տարօն ամն երեսուն, և մարզպան ամն տասն։

Վասն մահուան Տիրանայ՝ որդւոյ Վահանայ, և պատերազմին՝ որ յեղերս Աղի ծովուն։

Յետ այսքան պատմութիւն զրուցատրութեց, սուգ ժամանեաց խաղաղարնակ երկրիս մերում։ Զի Վահան յաւելեալ առ հարսն իւր, մեռանի. և կայ թագեալ 'ի դուռն սրբոյ Կարապետին, կացեալ իշխան Տարօնոյ և Բզահունեաց ամն երեսուն։ Բայց որդի նորա Տիրան հրամանաւ Վաշդենայ Վրաց իշխանին և հօր իւրոյ Վահանայ գնաց 'ի դուռն Խոսրովայ, յառաջ քան զգնալն Հերակլի 'ի պարսիկս. և եղեալ Խոսրովայ ընդ որդեգիրս, լեալ մարզպան Հայոց, առնու զօր բազում, և գայ 'ի վերայ Յունաց որպէս թէ 'ի պատերազմ։ Բայց յղէ 'ի կայսրն, թէ մի ինչ երկնչիր յիմոյ գալոյս. այլ տուր ինձ քաղաք մի, զի ժողովեալ զզօրս Հայոց, և մնայցից քեզ 'ի Թիկունս։ Իսկ նա ուխտ սիրոյ դներ 'ի միջի, ոչ միայն մարզպան Հայոց և Պարսից համարեալ՝ այլ և դիմէլեկոս առնել բովանդակ Հռովմոց։

Զայսոսիկ լուեալ Վաշդեան Վրաց իշխանն՝ առաքեաց առ Խոսրով, եթէ նենգեաց քեզ Տիրան,

և եղև ընդ Յոյնս. արդ առաքեա ութ հազար այրուձի ընդ Ս՝անանդ, և ես տայց զնա 'ի ձեռս քո։ Իսկ Թագաւորն կոչեաց զ՝Ոչիկ զՍ՝ բաց իշխանորդին, և արար մարզպան. և զՍ՝ինեաց իշխանն ձեռացկոծ տայր հանել որպէս զնեղաւոր և զխաբող ազգ։ Այս առաքեաց ինքն առ Ս՝աշտեան զօր հինգ հազար. իսկ Ս՝աշտեան գրեաւ Թուղթ առ Տիրան այսպէս. Լեղացար պանդխտութիւն, արդ արի եկ՝ զի խորհեսցուք ինչ վասն արքայի։

Իբրև ընթերցաւ զթուղթն, 'ի նոյն աւուր եկն թուղթ մի 'ի Համամայ քեռորդւոյն Ս՝աշդենայ, ծանուցանել զնեղութիւնն՝ որ ինչ առաջի կայր 'ի զօրացն եկեղոյն 'ի Պարսից։ Այս նորա վաղվաղակի թուղթ գրեաւ 'ի Ս՝աշդեան, յամօթ առնելով վասն ծածուկ իրայն։ Այս բարկացեաւ Ս՝աշդեան, ետ ածել զՀամամ, և ծայրատել զոտս և զձեռս նորա։ Այս առեաւ զպարսիկս՝ էանց ընդ գետն Նորոխ, և գնաց 'ի քաղաքն Համամայ՝ որ կոչի Տամբուր. էհար սրով և հրով, և գերեաց զքաղաքն։ Իսկ 'ՊԷ եպիսկոպոսն քաղաքին Ս՝անկնոս անիծեաց սաստիկ զիշխանն. և նորա հրաման տուեաւ պարսկացն՝ կոտորել զքահանայսն յեկեղեցին, որ կոչի 'ՊԷ Սիոն։ Իսկ եպիսկոպոսն աղօթեաւ առ Ա՝ծ լուութիւն, միայն զայս հանեաւ 'ի լոյս՝ թէ եղիցի քաղաքս խոպան և աւերակ, և ոչ ոք իցէ որ բնակիցի 'ի սա յաւիտեանս յաւիտենից։ Այս արկեաւ զինքն 'ի վերայ սեղանոյն, զենին զնա յաւուր Պենդակոստէին յառաջ քան զՔրիստոս պատարագելն։ Այս 'ի միւսում աւուրն ձայթեաւ ամպոց երկնից, հրայրեաց արար զնա մինչ նրատեր առ դուռն քաղաքին Տամբուրայ։ Զայս յետոյ շինեաց Համամ, զիւր անուն դնելով Համամաշէն։ Այս 'ի գլուխ եւ աղօթք Ս՝անդնոսի. զի երեքհազար այր 'ի միւսում գիշերի սատակեցան, և այլքն փախեան, և քաղաքն աւեր մնաց։

Ապա 'ի սոյն ամի եկանէ Հերակլ, և սպանանէ զԽոսրով. և յիշեաց զերդումն՝ զոր ընդ Տիրան և ընդ ինքն, և կացուցեաւ մարզպան Ամ՝ Հայոց, և ինքն գնաց 'ի Կոստանդինուպոլիս։ Այս յետ ութամի եկն Ա՝բդռահիմ քեռորդի Ա՝ահմետի բազում

աղխիւ, ուԹևտան հազար առնևձիոյ ընդ իւր բե-
բեալ, խնդրէր հարկս 'ի Հայոց։ Իսկ Տիրան ար-
ձակեաց՝ ժողով լինել համօրէն զօրու 'ի պատերազմ։
Օ՞ր դիպօղ ժամանակ գտեալ իւր՝ որդին Ա՞ աշդե-
նոյ Ջ՞ջիկ Ա՞ ըաց իշխանն, ապստամբեցուցանէ զգ-
բոմանդակ Հայք՝ չերԹալ առ նա։ Օ՞ այս տեսեալ
Տիրանայ ԹԷ՝ ամ ինչ 'ի վերջ հասեալ է, եդ զայս
բանս առաջի զօրաց իւրոց ուԹ հազարաց՝ որք կա-
մաւ էին եկեալ, ԹԷ՝ ով Ք՞ռեի ժողովուրդք, լաւ է
ինձ մեռանել՝ քան զեկեղեցի՝ այ հարկատու լինել
Տաճկաց։

Եւ 'ի վաղիւն ժողովեալ 'ի ստորոտն Գ՞րգուոյ՝ որ
ընդ հարաւոյ, 'ի դաշտ անդ խմբեցան յառաւօտէ
մինչև յերրորդ ժամն։ Գ՞ռեռ և սիախստեայ էին ա-
բարեալ զտաճկաստանն, իսկոյն իշխանն Ա՞նձաւա-
ցեաց ապստամբեալ 'ի դուրս եելեալ, և սուր 'ի վե-
րայ Հայոց զօրուն դնէ։ Իսկ Տիրան պատառեալ
զերկու ուազին, պատահեցաւ Սահուռայ, և ասէ.
Կաց ուրացեալ Սահուռ, զի ըմբռնեաց զքեզ Ք՞ռ
'ի ձեռս իմ։ Եւ ձգեաց զգլուխն Սահուռայ սրով,
և ինքն անդէն պսակեցաւ սրով երկու իշխանօքն։
Եւ ապա 'ի մէջ առեալ զզօրսն Հայոց, ամենեցուն
զկատարած կենաց հասուցանէին։ Իսկ ոմանք փա-
խըստեայ լեալ, անցանէին հանդէպ մօրաԹաԹախ[1]
Օ՞ձ քաղաքի։ Եւ կոտորեալքն 'ի Պարսիցն կան 'ի
պահեստի ընդ վկայարանաւն, և վերակոչի անունն
՝որ Բանակ։ Իսկ Ա՞ըդռահիմ անցանէ ընդ Հայրք
և 'ի Բասեան, 'ի Ա՞ իրք և 'ի Ջ՞ախախս և 'ի Ա՞ ա-
նանդ. և առեալ հարկս, դառնայ 'ի տաճկաստան։

'Ի սոյն ամի քակի եկեղեցին, որ յԱ՞շտից վանս
հիմնարկեալ 'ի սրբոյն Գ՞րիգորէ. և Կարապետն յին-
նակնեանսն, և Մ՞ատրավանն 'ի Տարօն, և մեծ կա-
Թուղիկէն յԱ՞ստղաբերդ, և Ա՞ներսիսի հայրապետի
կաԹուղիկէ եկեղեցին 'ի Թիլին յԱ՞կեղեաց գաւառն։
Եւ մարդպանն կայ Թաղեալ 'ի դուռն կաԹուղիկէին
'ի Զիւնկերտ Տարօնոյ 'ի Պորպ քաղաքի։

1 Յորինական մօրանախ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յ ԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՍ այս սկսեալ առ սրբով Գրիգորիս Օէնորայ ասորւոյ՝ վասն որ ինչ յիւրեանս տեղիսն գործեցաւ Թողեալ գրով՝ի նոյն եկեղեցին։ Հաճոյ է Թուեալ այլոց յետոյ զնոյն պահել զկարգ, միայն որ ինչ իշխան տանս այս առնէր քաջութիւն՝ իւրաքանչիւր հայր գրեալ զիւր ժամանակին անցս Թողցը. և աՀեալ, պատմութիւն Աստուծոյ կոչի։ Օ՛ի այն հարանց անուանքն, որք գրեալք կան մինչև՝ի Թոդիկ, ամենեքեան Աստուածք էին. և տունն այն աստուծի գրով և պաշտամամբ է վարեալ մինչև՝ի Թոդիկ։ Այս նա փոխեաց զամենայն կարգս, և զԱստուծոյ ցեղն բնաւ հալածական արար՝ի վանացն։

Բայց զոր ինչ՝ի Տրդատայ մինչև՝ի Խոսրով արքայ Պարսից լեալ է՝ի տանս մամիկոնեանից՝ ոչ գտի գրով։ Այլա տեղեկացայ յոմանց՝ Թէ՝ի կողմանս Ուռհայի է կրօնաւոր ոմն Մարմառա կոչեցեալ, և ունի զգիրսդ զայդ։ Գնացի և տեսի առնմա զգիրսն, որ՝ի նոյն ինքնակնեան վանան էր գրած. և նա՝ի զօրացս ուստեք ունէր՝ի Պարսից կամ յայլոց ուրուք, որ ապականեալ զերկիր, և գիրքն կարծեմ Թէ անտի է անկեալ՝ի նա։ Այս Թարգմանեալ՝ի նմանէ քսան և ութ պատՀեան, և տասն՝ որ՝ի գրի առ իս կայր, և բովանդակեալ արարի երեսուն և ութ պատՀեան,՝ի մի գիրս հաւաքելով Թողի մանկանց եկեղեցւոյ։

Յ՝ ժամանակս Թագաւորութեն Հերակլեայ, և՝ի մահուն Խոսրովու, հրամանաւ Ներսիսի Հայոց կաթողիկոսի, և յիշխանութենէ մամիկոնեան Ս ահանայ՝ զոր մայրենեաք կամարական կոչեն, որ երեսներորդ երկրորդ էր՝ի Մուշեղայ՝ զոր Ռաջակորով կոչեն, գրեալ և կազմեալ՝ի վանան Գլակայ՝ի դուռն սրբոյ Կարապետին, յորում կայ նշխարք Կարապե-

տին՝ բևեռուին յայտնի գոլ, Թողի անմոռաց յիշատակ ինձ և իմոցն ես Յովհան մամիկոնեան եպիսկոպոս, երեմներորդ հինգերորդ 'ի Օ՞ենոբայ առաջին եպիսկոպոսէն մամիկոնենից, 'ի հայրապետութեանն Սամուէլի՝ որ չորեքամսեան էր նստեալ։

Արդ որք զկնի դոցա այլք նստին վանականք, զոր ինչ գործի յաւուրս նոցա 'ի տանս յայսմիկ՝ դիցէ 'ի նոյն մատեանս. զի այսպէս գտաք օրինադրեալ յառաջնոցն։

Դարձեալ ես ՝որ Յովաննէս մամիկոնեան եպիսկոպոս, աղաչեմ զմանկունս եկեղեցւոյ ՝այ. զի յորժամ զշարադրութիւնս զայս ընդօրինակէք, մի ինչ թուեսցի ծաղը ումեք. այլ և զիմ պատՃեանն անպակաս և լի գրով դրոշմեսջիք զհետ գրելեացդ, զի օրհնեալ լիջիք 'ի՞ Աստուածէն, և 'ի մեր նուաստ հովուական աղօթից, և բովանդակ իսկ 'ի Քրիստոս. և ՝ուծ վարձահատոյց լիցի գրողացդ և ընթերցողացդ, ամէն։

ՎԱԽՃԱՆ

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբդուահիմ 57. 58:
Աբրահամ կաթողիկոս 8:
Աթանաս Գլխակայ առաջնորդ 8:
Աղի Ծով 56:
Այծից բերդ 36:
Այծաան, փէ՝ Յեստանկ:
Այծ տան, փէ՝ Յեստանկ:
Անգակ 11. 34. 39:
Անգրէաս Գլխակայ առաջնորդ 8:
Անձաւացիք 58:
Անտան և Կրօնիդէս 7:
Աչքից վանք 58:
Ապահունիք 25. 27. 30. 43. 47. 56:
Առաղս 24:
Առինչք 32:
Աւար 32. 33:
Աստիք 38. 59:
Աստեղունք, Աստեղոնք, փէ՝ Աստղոն ամրոց:
Աստղաբերդ 58:
Աստղոն ամրոց 15. 21. 48:
Արծանի 28. 31. 38. 47. 49. 50:
Արդակ, փէ՝ Անգակ:
Արիք, փէ՝ Պարիք:
Արծուիք, փէ՝ Այծից բերդ:
Արծրունիք 9. 12. 28. 29. 37:
Արձան 15:
Արջ 31. 54. 55. 56:
Արտամետ 12:
Արտից գետ 38. 39:
Աւետեաց բլուր 7. 9. 29:

Բալհասատան, փէ՝ Բահլ Շահատան:
Բահլ Շահատան 13. 15. 28:
Բասեան 15. 58:
Բարթուղիմէոս Գլխակայ առաջնորդ 8:
Բարսեղ Գլխակայ առաջնորդ 8:
Բաւար, փէ՝ Բոտար:
Բոտար 28:
Գալհար, փէ՝ Գահար:
Գահար 15. 30:
Գայլ Վահան, փէ՝ Վահան մամիկոնեան:
Գարհար, փէ՝ Գահար:
Գգռոս, փէ՝ Գրգուռ:
Գիրեհ 44:
Գլակ 7. 8. 9. 12. 29. 31. 33. 43. 49. 54. 56. 59:
Գողոց աղբեւր 39:
Գոմք 12:
Գորգ Շատախօս 54:
Գռէգուռ 30:
Գրգուռ 30. 58:
Գրգռոս, փէ՝ Գրգուռ:
Գրիգոր Լուսաւորիչ 7. 17. 20. 38. 49. 58. 59:
Գրիգոր Գլխակայ առաջնորդ 8:
Գրիգոր Հայրապետ 50:

Դաւիթ Հայրապետ 49:
Դիմաւիոս մի 'ի խոտաձարակացն 19:
Դուին 8. 13–15. 43:

Եկեղեաց գաւառ 29. 58:
Եղանց բերդ 24. 32:
Եղնուտ, փէ՝ Եղանց բերդ:
Ենարկիոս մի 'ի խոտաձարակացն 19:
Եպիփան Գլխակայ առաջնորդ 7:
Եպիփան մի 'ի խոտաձարակացն 19. 43. 49:
Երեզնաւան 54:
Երուսաղէմ 54:
Եփրեմ Գլխակայ առաջնորդ 8:

Զենոբ Գլխակ 7. 59. 60:

Թադէոս Գլխակայ առաջնորդ, փէ՝ Թոդիկ:

Թէոնեան մի ի խոտաձարակացն 19։
Թիկն աւան 29. 34. 58։
Թմբրաձոր 42։
Թոդիկ 8—12. 16. 20. 59։

Ժողովք 40։

Իննակնեան վանք 12. 28. 58. 59։

Խարճ 22։
Խոյթ 13. 15։
Խոսրով Ա. արքայ Պարսից 12։
Խոսրով Բ. արքայ Պարսից 12—15. 28—30. 36. 43. 49. 54. 56—59։
Խոտաձարակք 9. 16։

Ծիայ Ծոնն 26։
Ծիծառն կամ Ծիծառնկ 54. 55. 56։
Ծիծառնիկ 54. 55։
Ծծմակ 23. 24. 31։
Ծմակ, փէ՝ Ծծմակ։

Կախմխեայ բլուր, փէ՝ Կաղամախեայ բլուր։
Կաղամախեայ բլուր 50. 53։
Կաղամանեայ բլուր, փէ՝ Կաղամախեայ բլուր։
Կարապետ, փէ՝ Յովհ. Կարապետ։
Կարին 14. 15։
Կենայ վայրք 42։
Կեսարիա 9. 12. 20. 54։
Կիւրեղ Գլակայ առաջնորդ 8. 12։
Կոթ 25. 27։
Կոմիտաս Գլակայ առաջնորդ 8։
Կոմիտաս կաթողիկոս 8։
Կոստանդինուպոլիս 54. 57։
Կորի 28։
Կուառք 8. 12։
Կուրայ կամ Կուրան 48։
Կրեհ, փէ՝ Գիրեհ։
Կրօնիգէս 7. 20։

Համամ 57։
Համամաշէն 57։
Հայրաբլուր 43։
Հայր բլուր 29։
Հայկերա 53։
Հայրկերա, փէ՝ Հայկերա։
Հայք 13։
Հանդիսեանք 47։
Հաշտեանք 15. 30. 31. 43. 44. 46. 47. 52. 53։
Հարցո, փէ՝ Խարճ։
Հարք 29. 30. 58։
Հեր 15։
Հերակլ կայսր 43. 54. 56. 57. 59։
Հոն 45։
Հոնընկէց 44. 47։
Հովեանք 48։
Հոռոմք 56։
Հռիփսիմեանք 8։
Հռոմ 12։
Հռոմք, փէ՝ Հոռոմք։

Զիւնկերա 58։

Ղիմինդոս 8։

Ճորոխ 57։

Մակար, փէ՝ Մարկոս։
Մահմէտ 57։
Մահու ագարակ 34։
Մահու աւիթ 48։
Մահու բլուր 36։
Մամիկոնեանք 9. 43. 59։
Մանդակունի, փէ՝ Յովհ. Մանդակունի։
Մանեայ այր 7։
Մանկնոս 57։
Մատրավանք 12։
Մարիամ կին Վարդայ պատրկի 9։
Մարկոս Գլակայ առաջնորդ 8։
Մարկուց փող 47։
Մատրավանք 51. 53. 58։
Մարմառա 59։
Մարտից փող, փէ՝ Մարկուց փող։
Մեծամոր 39։
Մեղու 23։
Մեղրի 15. 23. 32. 38. 40. 42. 51. 53։
Միհրան 15. 19—28. 30. 31։
Միհրիսոսով 46։
Մոգուց գերեզման, փէ՝ Մոկունք։
Մոխրայ երկիր 38.
Մոկունք կամ Մոգաունք 45։
Մշու բլուր 55.
Մովսէս կաթողիկոս 8։
Մուշ 13. 21. 23. 24. 31. 34. 37. 49։
Մուշեղ Վաչակորով 9. 13—15. 20. 21. 26. 28. 43. 44. 53. 56. 59։

Մօրայ գուռն 22։
Մօրիկ 12–15։

Յեստանկ 48։
Յոյնք 9. 12–16. 27. 30. 43. 56. 57։
Յովհաննէս Ա. Գլակայ առաջնորդ 8։
Յովհաննէս Բ. Գլակայ առաջնորդ 8։
Յովհաննէս Կարապետ 9. 12. 17–19. 26. 28. 29. 33–35. 40. 43. 44. 47–52. 54–56. 58. 59։
Յովհան Կեսարու Հայրապետ 54։
Յովհան մամիկոնեան եպիսկոպոս 60։
Յովհաննէս մի՛ի խոտաձարակացն 19։
Յովհան Մանդակունի 8։
Յովսէփ Գլակայ առաջնորդ 8։

Նարդոսք 11։
Նարեսոս, փէ՝ Եղնարկիոս։
Ներսէս Բ. 55. 56. 59։
Ներքինանկնիս 52։
Ներսէս Գլակայ առաջնորդ 8։
Ներսէս մեծն 58։
Նիխոր 24։
Նիխորձէս 18։

Շահաստան, փէ՝ Բահլ Շահաստան։
Շատախ 15. 54։
Շատախօս, փէ՝ Գորդ։
Շիրականիք 42։

Ողկան 16. 21. 26. 40. 55։
Ողնու բերդ. փէ՝ Եղանց բերդ։
Ողնուտնիք, փէ՝ Եղանց բերդ։
Ողմիզդ Պարսից արքայ 12. 13։
Ուռհա 59։

Պալունիք 31. 39–43. 46. 52։
Պարեխ 12։
Պարսք 12. 19. 22–28. 32. 34–40. 42. 47. 56. 57. 58. 59։
Պարսից դէմ կամ կողմ 51։
Պողակ կամ Պողկ, փէ՝ Պուղկ։
Պրպէ կամ Պորպէս քաղաք 30. 36. 58։
Պուղկ 52։
Պօղիկարպոս մի՛ի խոտաձարակացն 16. 19։

Ջախվանիք 58։
Ջամբ խոսրով, փէ՝ Խոսրով Ա։
Ջոջիկ 57. 58։

Ռահան 31. 32։

Սագաստան 9։
Սագակ, փէ՝ Նարդակ։
Սալնայ երկիր 38։
Սահակ Գլակայ առաջնորդ 8։
Սահուռ 58։
Սամուէլ հայրապետ 60։
Սանասայ Ծծմակ, փէ՝ Ծծմակ։
Սասուն 13. 15. 25։
Սերեմ, փէ՝ Սրեմ։
Սերեմաձոր, փէ՝ Սրեմաձոր։
Սերեմավայր, փէ՝ Սրեմավայր։
Սիմէոն մի՛ի խոտաձարակացն 19։
Սիւնիք 57։
Սմբատ իշխան Հաչտենից 41։
Սմբատ որդի Վահանայ 31–49. 52. 53։
Սուկաւ 9։
Սուրբ Բանակ 58։
Սուրբ Սիոն 57։
Սուրբ Ստեփաննոս Եկեղեցի 49։
Սուրէն եղբայր Վախտանգայ 37-39։
Ստեփաննոս Նախավկայ 49։
Ստեփաննոս որդի Վահանայ մամիկոնեանի 55։
Ստեփաննոս որդի Վարդայ պատրիկի 9. 29. 43. 49։
Սրեմ 39։
Սրեմաձոր 39։
Սրեմավայր 45։
Սրոց կամ Սրենց ձոր։

Վախտանգ 30–37. 43։
Վահ 32։
Վահան Մամիկոնեան կամ Կամսարական 15. 20–41. 44–56։
Վահան որդի Վարազայ 46։
Վահանովիտ 41.
Վայրանկանիս 52։
Վանանդ 57. 58։
Վաչգեան 56–58։
Վաչիր 25–27։
Վաչտեան, փէ՝ Վաչգեան։
Վարազ իշխան Պալունեաց 39. 40. 41. 44. 46. 48։
Վարազաբլուր 42։

Վարազակ 44:
Վարազակարքուր, թէ՝ Վարազաբքուր:
Վարդ պատրիկ 9:
Վարդուհրի 49. 50. 51:
Վարշիր, թէ՝ Վաշիր:
Վիրք 8. 56–58:

Տաճիկք 58:
Տաճկաստան 58:
Տամբուր 57:
Տայք 55:
Տարօն 12–15. 20. 28. 29. 30. 45. 49. 53. 54. 56. 58:
Տաւրոս 45:
Տիգրան զօրապետ 43–46:
Տիրան 49. 51. 53. 56–58:
Տրդատ 38–59:

Փադիկաւ, թէ՝ Փանդիկաւ:
Փանդիկ կամ Փանդիկաւ 49. 52:
Փոկաս 14. 15:
Փոյադիկ, թէ՝ Փանդիկ:

Քաղկեդոն 12:
Քարքէ 28. 38:

Օձ քաղաք 21. 22. 58: